№ 30 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9 № 30

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, փետրվարի 9-ին

ԱՐՍԷՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՇԻԽԵԱՆՑԻ

մահվան քառասունքի օրը Զրկինեանց եկեղեցում (Գրիբօէդօվսկի փող.) պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի, որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին նրա ամուսին Մարիամ Միքայէլեան Շիխեանցը և աներ Միքայէլ Սարգսեան Մաղաթեանը։ Հոգեհանգստի սկիզբն է ժամը 12-ին։ 1—1

Խաթայի Բաղդասարեան, Գոհար Սարգսեան, Յովհաննէս և Շմաւօն Թումանեան Տէր-Մարկոսեանցները խորին վշտով յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր որդու, երկրորդը՝ ամուսնու և վերջինները հօրեղբօրորդու՝

ԴԱՒԻԹ ՄԿՐՏՉԵԱՆ ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 8ին, առաւօտեան 8 ժամին։ Խնդրում են շնորհ բերել յուղարկաւորութեանը ամսիս 10-ին, ուրբաթ օրը, առաւօտեան 10 ժամին, Թանդօյեանց ս. Աստուածածին եկեղեցին իր բնակարանից, Միքայէլեան փողոց № 72 դէպի Խօջիվանքի գերեզմանատունը։ Ամբիծքը այսօր երեկոյեան ժամը 6-ին։ 1—2

ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԵՒ ՉՈՒԳՈՒՆԻ ՁՈՒԼԱՐԱՆ

Ի. Ս. ՐՈՒԿՍԻ

Այս տարվայ փետրվարի 1-ից վերանորոգեց իր գործողութիւնը։ Գործարանի պահեստում կան չուգունի ձուլվածքներ, Ջրմուղի ֆասոնական մասը և զանազան Ջրաղացի պատկանելիութիւն։ Պատուէրներով խնդրում եմ դիմել՝ Тифлисъ, Великокняжеская ул. д. № 49, հեռախօս № 556։

1—4 (հ.կ.)

Կառավարիչ՝ Ա. Դ. Խորին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բացառիկ դրութիւն. Պարսկաստանը և հայերը. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Տարեգրքը. Մեր արիւնոտ ներկայի առիթով. Ո՞ւր դիմենք. Նամակ Նուխուց. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Բուլղարիայի միջամտութեան հարցը Թուրք կարծիքի առաջ. Կոչ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՑԱՌԻԿ ԴՐՈՒԹԻՒՆ

Մեր առաջնորդողի առիթով, որ հրատարակել էինք «Մշակի» № 26-ում, Գ. Մնացականեան զետեղել է մի յօդուած «Արշալոյս» լրագրի մէջ։

Մենք մեր յօդուածում առաջ բերելով գնդապետ Լէվիցկու շրջաբերականից մի կտոր, որի մէջ գնդապետը պատուիրում է գիւղացիներին անյապաղ վերադառնալ իրանց բնակութեան տեղերը, ասել էինք թէ դա մի այնպիսի պատուէր կամ առաջարկ է, որի վերաբերմամբ հային կը մնար միայն մի բան ասել թէ՝ «իմ սրտիցն ես խօսում, իմ լիղձն ես արտայայտում»։ Եւ սակայն Կըրզան գիւղի հայերը այդ չեն կարող ասել։ Իսկ Կըրզան գիւղի վիճակի մէջն են նոյնպէս Բաղա, Սարով, Մինքեանդ և ուրիշ մի քանի գիւղեր։

Այդ գիւղերը չեն կարող ներկայումս վերադառնալ իրանց տեղերը, որովհետև բոլորովին բացառիկ դրութեան մէջ են, որովհետև նրանք կղզիացած են ապրում Թուրքական օղակներում, որովհետև յոյս չունեն, թէ կարող են ուրիշ հայերի հետ միանալ վտանգի րոպէներին և պաշտպանութիւն ստանալ այդ հայերից։

Լէվիցկու առաջարկութիւնը, որ առհասարակ համակրելի է, և հայի սրտին մօտ է, ներկայ հանգամանքում չէր լուծում գործնական հարց, այսինքն չէր տալիս հնարաւորութիւն Կըրզանի գիւղացուն վերադառնալու իր գիւղը։ Եւ ուրեմն պահանջել մի այդպիսի վերադարձ, կը նշանակէր պահանջել անկարելին։

Մենք ասում էինք մեր յօդուածում, որ իրանք գիւղացիները կը վերադառնային, եթէ որ և է հնար լինէր։ Եւ մեր կողմից յայտնում էինք հետեւեալը՝

«Տուէք ապահովութիւն այդ գիւղի համար, զինեցէք նրան, որքան կարելի է կատարեալ կերպով, վստահութիւն տուէք գիւղացուն, որ նա կարող է պաշտպանել իրան աջող կերպով և այն ժամանակ գիւղացին առանց պատուէրի էլ ինքը կը շտապի իր գիւղը վերադառնալու»։

Ահա մեր խօսքերը, որոնք պարզ ու բացայայտ կերպով ուզում են հասկացնել իշխանաւորներին, որ բաւական չէ միայն պահանջել Կըրզանի ու Բաղայի նման գիւղերից վերադարձ դէպի իրանց հողերը, այլ և պէտք է ապահովել այդ գիւղական համայնքների կեանքը։

Իսկ այդ ապահովութիւնը չը կայ։ Եւ որ աւելի սոսկալին է, ոչ մի վստահութիւն չը կայ, որ այսօրվայ ապահովութիւնը կարող է համարվել և վաղվայ ապահովութիւն։

Հայ ժողովրդի մէջ կորել է վստահութիւնը թէ դէպի իր հարևան Թուրքը և թէ դէպի տեղական վարչութիւնը։

Հայ-Թուրքական ընդհարումները բոլորովին ուրիշ բնաւորութիւն տուին մեր կովկասեան գործերին։ Սա մասսաների մաքառման մի այնպիսի շարժում է, որ մեր երկրում երբէք չէ եղել։ Ճիշտ պետութիւններ միմեանց հետ կռուել են, պարսիկը օսմանցի Թուրքի հետ հաշիւներ է տեսել, պարսիկը և օսմանցի Թուրքը կռուել են ռուսների դէմ, բայց դրանք եղել են ժամանակաւոր, քաղաքական կռիւներ, որոնք վերջացել են։ Այս տարի կառավարութիւնը իր զօրքերով սաստեց վրացական յուզմունքները, բայց բաւական է, որ խաղաղութիւնը վերկանգնի և ամեն բան կը վերադառնայ իր սովորական վիճակին։ Բայց հայ Թուրքական ընդհարումները ուրիշ բնաւորութիւն ստացան՝ երկու տարրերի մաքառման արտայայտութիւն...

Եւ ահա ինչու ծագեց մեր օրերում մի հարց, որ երբէք չէր կարող ծագել սրանից մի տասն, քսան, յիսուն տարի առաջ։

Թուրքերին պէտք է զսպեր և կարող էր զսպել կառավարութիւնը, բայց գոլիցինեան ռէժիմը թողեց աւանդական պետական քաղաքականութիւնը Կովկասում և լաւ դէպքում միայն լուռ հանդիսատես եղաւ կատարվող դէպքերին։ Թուրքը իրան զգաց խրախուսված և ամեն բան տակն ու վրա եղաւ։

Հայ ժողովուրդը սկսեց վերաքննել իր կեանքի հարցերը, վերաքննահատել այն միջոցները, որոնք առաջ համարվում էին նրա գոյութեան համար բաւարար և դրանց համեմատ վերամշակել և վերանորոգել իր գոյութեան կռւի ծրագիրները։

Ընդհանուր և էական կէտը մնում է և կը մնայ՝ հաստատ լինել այն հողի վրա, որտեղ հայը ապրել է մինչև այժմ, բայց բացառիկ դէպքերում նա պէտք է կարող լինի մի այնպիսի դրութիւն ստեղծել, որ առանց հեռանալու իր մայր երկրից աւելի նպաստաւոր պայմանների մէջ դնէ իրան։

Եւ ահա ծագեցին գործնական ծրագիրներ հետեւեալ տեսակի.

Կըրզանի գիւղացիները համաձայն կը լինեն, օրինակ, վերաբնակվել Բաղանիս-այրում կոչված գիւղատեղում, որտեղ մինչև այժմ ապրում էին աւազակաբարոյ Թուրքեր, որոնք անթիւ վնասներ են հասցրել մօտակայ հայ գիւղացիներին։ Սարովի գիւղացիները նոյնպէս կարող էին բնակվել Բրուլ կոչված տեղում և նրա շրջակայքում, որոնք մինչև այժմ գտնվել են Թուրքերի տրամադրութեան տակ և միայն վնասներ են հասցրել մերձակայ հայ գիւղերին։

Սրանք հողի մասնաւոր փոխանակութիւններ են, որոնց կատար ածելը, առաջ եկած լինելով ծայրահեղ պատճառներից, առանձին վնաս չէ հասցնում հայ գիւղացիութեան, իսկ մի քանի դէպքերում նոյն իսկ որոշ առաւելութիւններ է տալիս նրանց։ Այդպէս է և քեօլանի աւազակաբարոյ տարրի տեղում հայկական կուլտուրական խաղաղ տարրի հաստատվելը։

Գ. Մնացականեանը բոլորովին աչքի առաջ չունի այն բացառիկ դրութիւնը որի մէջ գտնվում են որոշ գիւղեր և իր կողմից, հակաճառելով մեզ, միջոցներ է առաջարկում օգնելու գործին. Նա առաջարկում հետեւեալը.

«Նա (հայը) կը դիմի կառավարութեանը, որ հայկական գիւղերում լինեն պետական պաշտօնեաներ, ստրաժնիկ, նա կը կազմակերպի համայնական զինուորութիւն, բայց կը մնայ իր հողի վրա նոյն իսկ անհելի Թուրքերի մէջ, որովհետև այնտեղ երկիրը կարող է աւելի լաւ շահագործել»։

Ինչպէս տեսնում էք Գ. Մնացականեանը կրկնում է մեր խօսքերը, որ վերև առաջ էինք բերել և մենք, բայց որոնք չէին լուծում մեր առաջ դրած հարցը։

Սակայն մենք կը սպասենք Գ. Մնացականեանի յօդուածի խոստացված շարունակութեան՝ տեսնելու, թէ ինչպէս է նա ուզում օգնել Կըրզանի և նրա նման գիւղերի բնակիչներին։ Բայց իբրև մի ծանօթութիւն կը յայտնենք նրան, որ գնդապետ Լէվիցկին չէ պնդում այլևս Կըրզանցիների անմիջական վերադարձի վրա, և թոյլ է տուել, որ նրանք ազատվեն այն բանտից, որ կոչվում է գերութիւն Թուրքերի մէջ։

Նա չէր կարողացել այդ բացառիկ դէպքի վերաբերութեամբ կատար ածել իր խիստ պատուէրը։

Մնացածը յետոյ։

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

I

Մի քանի ժամանակ առաջ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը առանձին թղթով դիմեց Պարսից Շահնշահին, որի մէջ նկարագրելով Թուրք-հայկական ցաւալի ընդհարումները, հերքելով այն զրպարտութիւնները, որ զանազան խռովարարներ և բանսարկուներ բարդում են հայերի վրա, որոնք որպէս թէ ագրէսիվ գործողութիւններ են կատարում պարսկա-հպատակ մուսուլմանների դէմ, խնդրեց հաւատ չը ընծայել զրպարտութիւններին, հրամայել վերստուգել Անդրկովկասից Պարսկաստան տեղացող բոլոր հեռագիրները ընդհարումների մասին, տեղական հիւպատոսարանների միջոցով, և չը զրկել Պարսկաստանի հայ ժողովուրդը այն արքայական խնամքից ու ուշադրութիւնից, որ մինչև այսօր Շահը ցոյց է տուել իր հաւատարիմ ժողովրդին։

Մի և նոյն ժամանակ Վեհ. Կաթողիկոսը դիմեց առանձին գրութեամբ Պարսից գահաժառանգին, նոյն իմաստով, ուղարկելով նրան և Շահին ուղղված թուղթը Շահին հասցնելու համար, ինչպէս և նամակներ ուղարկեց Թաւրիզի գլխաւոր Մուշտէյիդին և Շէյխ-ուլ-Իսլամին, բացատրելով իրերի իսկական վիճակը և բանսարկուների չար ձգտումները՝ ընդհարումն առաջ բերելու նաև Պարսկաստանում հայերի և պարսից ժողովրդի մէջ։

Արդ, Պարսից գահաժառանգը ստանալով Վեհ. Կաթողիկոսի թղթերը, որ ներկայացրել էր Թաւրիզի առաջնորդական խորհուրդը, հրամայել է Ատրպատականի գեներալ-նահանգապետ Նիզամ-ուլթանէին առաջարկել Թաւրիզի հայ հասարակութեան ժողով գումարել, պատգամաւորներ ընտրել և պարսից կողմից ևս ընտրուած պատգամաւորների հետ միասին գալ Թիֆլիս, ներկայանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Թուրքաց Շէյխ-ուլ-Իսլամին և մասնակցութեամբ Թիֆլիսի հայ և Թուրք հասարակութեան ականաւոր ներկայացուցիչների խորհրդակցել թէ ինչ միջոցներ ձեռք պէտք է առնել վերջ դնելու համար հայերի և Թուրքերի ընդհարումներին։ Գահաժառանգը կարևոր է համարել պատգամաւորութիւնը նրա համար, որովհետև այդ ժամանակ Կովկասի զանազան վայրերից, գլխաւորապէս Ղարաբաղից և Նախիջևանից ստացվում են գահաժառանգի և Մուշտէյիդի անունով հեռագիրներ, թէ «Հայերը նախայարձակ լինելով պաշարել են մուսուլմաններին և շուտով պէտք է բնաջինջ անեն նրանց, ուստի ի սէր կրօնի անմիջապէս օգնութիւն հասցրէք»։

Սակայն շնորհիւ գեներալ-նահանգապետ Նիզամ-ուլթանէյի, որ շտապում է ստուգել այդ գրգռիչ հեռագիրները պարսից հիւպատոսների միջոցով, մի քանի օրից յետոյ ստացվում են հեռագիրներ այնքան հանգստացուցիչ, որ Գահաժառանգը աւելորդ է համարում պատգամաւորութեան Թիֆլիս գալը և բաւական է համարում միայն նամակներ գրել Վեհ. Կաթողիկոսին և Թիֆլիսի Շէյխ-ուլ-իսլամին։ Այդ գրութիւնները, ինչպէս և Թաւրիզի Մուշտէիդի գրած նամակները Շէյխ-ուլ-իսլամին ուղարկված են Թիֆլիս, պ. Հ. Առաքելեանին, ներկայացնելու Վեհ. Կաթողիկոսին և Շէյխ-ուլ-իսլամին։

Թաւրիզի Առաջնորդական խորհուրդն ևս առանձին զեկուցմամբ դիմել է Վեհ. Կաթողիկոսին վերոյիշեալ անցքերի մասին։

Բացի դրանից, Հ. Առաքելեան ստացել է Ատրպատականի Հայոց Թեմական պատգամաւորական ժողովի մի խնդրագիրը Վեհ. Կաթողիկոսին մատուցանելու համար։

Ժողովը յայտնում է, թէ ամբողջ տարի է արդէն, որ Ատրպատականի Թեմական-պատգամաւորական ժողովը աշխատում է ունենալ մի արժանաւոր հոգևոր պետ Թեմի համար, բայց իզուր։ Սակայն Կովկասեան յուզմունքները ու արիւնհեղութիւնները գլխովին տակն ու վրա են արել հայերի կեանքը Ատրպատականում և արդէն վրէժխնդրական փորձեր տեղի են ունենում այդ Նահանգի զանազան տեղերում և մի այդպիսի ծանր ու փոթորկալից ժամանակ ժողովուրդը չունի հովիւ։

«Տարակոյս չը կայ—ասված է խնդրագրի մէջ—որ մի արի ու անձնուէր առաջնորդ, իբրև պաշտօնական գլուխ՝ ազատ կը լինի կառավարչական մարմիններին դիմումներ անելու։ Նա՝ լարված մեքենայութիւններն և պատրաստվող փոթորիկներն իմաստութեամբ կարող է ցրվել և խրախոյս ու քաջալեր լինել մեր վհատեալ ժողովրդին։»

Ապա զեկուցանելով, որ երրորդ ընտրութիւնից 5 ամիս է անցել, երբ առաջնորդ ընտրվեց Նահապետ եպիսկոպոսը, բայց մինչև այսօր ոչ մի կարգադրութիւն չեղաւ նրա Թաւրիզ գնալու մասին, զեկուցանելով, որ տեղապահ Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանի ոյժերից վեր լինելով կատարել առաջնորդական պատասխանատու պաշտօնը, նա ինքն, զգալով այդ, հրաժարվել է պաշտօնից և մեկնել Էջմիածին, ժողովը խնդրում է կամ փութացնել Նահապետ եպիսկոպոսի մեկնումը, կամ ուղարկել մի այլ խոհուն և փորձառու եպիսկոպոս։

Մեր կողմից մենք միայն այս կարող ենք աւելացնել, որ Էջմիածինը պէտք է շտապէ առանց րոպէ կորցնելու վերջ տալ Ատրպատականի Թեմի առաջնորդի ընտրութեան խնդրին։

II

Աւելորդ չենք համարում առաջ բերել «Кавказъ» լրագրից մի թղթակցութիւն, որ լուսաբանում է Թուրք խանակինների դերը Պարսկաստանում։

Ռաշտ, 24 յունվարի։ Այսօր, կէսօրվայ ժամի 2-ին, Թեհրան գնալու համար, Ռուսաստանից ժամանեց Ռաշտ, ռուսաց կայսերական դեսպանը, պ. Շպէյեր։ Քաղաքից դուրս, Փիր-բազարում, դիմաւորեցին պ. դեսպանին պարսից իշխանութիւնը և տեղական ռուս գաղութը։ Այստեղից պ. դեսպանը, ռուսաց և պարսից կօզակների և իրան դիմաւորող անձանց ուղեկցութեամբ, գնաց հիւպատոսարանի բնակարանը։ Յաջորդ օրը առաւօտեան նա ուղևորվեց Թեհրան։ Ռաշտի փողոցներում մի քանի տեղ այս քանի օրերս կպցրել էին պարսկերէն լեզուով Թռուցիկներ հետեւեալ բովանդակութեամբ. «Աստուծոյ ծառաներ... Թէ՞յ մի գործածէք, մի խմէք խմիչքներ, հանքային ջրեր, լիմօնադներ, օղի, գինի, գարեջուր։ Վայ նրան, ով չի լսիլ մեզ, որովհետև հայերը, կամենալով վրէժ հանել իրանց բաղուեցի եղբայրների և Բագուի գործերի համար, դրանց թշնամարել են։ Հայերը սկսել են կռուել Թուրքերի հետ այդպիսի ճանապարհով։ Խօրասանում 800 հոգի թէյ են խմել ու մեռել։ Բուշեհրում մեռել են 60 հոգի։

Մի վերցրէք հայերի դեղատներից դեղօրայք, ով վերցնի, կը մեռնի»։

Չը նայելով այդ Թռուցիկի ակնյայտնի անհեթեթութեան, այնուամենայնիւ նա ներգործութիւն ունեցաւ և պարսիկները, մանաւանդ տգէտ ժողովուրդը, լրովին հաւատացին այդ կոչին, որը պրօվօկատօրները արել էին Պարսկաստանում ևս հայերի ու Թուրքերի մէջ ընդհարումներ ստեղծելու նպատակով, դադարեցին գործածել վերոյիշեալ անհրաժեշտ առարկաները, և այդ ապրանքների գները, նամանաւանդ ռուսականին, սաստիկ ընկան։ Հարուստ պարսիկները, առանց թէյի չը մնալու համար, առնում էին հին, վաղուց բերված, շաքար, թանգ գներով։ Այդ տեսակ Թռուցիկները այլ և այլ ձևի լուրերի հետ միասին, որ տարածում են ոչ միայն այստեղ, այլ և Պարսկաստանի շատ քաղաքներում, անտրճանաբար անախորժութիւններ են առաջացնում պարսիկների ու հայերի մէջ։

Վերոյիշեալ Թռուցիկներից յետոյ քաղաքում յամառ կերպով խօսում են գալիք ընդհարման մասին հայերի հետ մուհարրամի տասներորդ օրը, երբ մուսուլմանները գտնվում են աւելի գրգռված դրութեան մէջ։

Տեղական իշխանութիւնների ձեռք առած միջոցների մասին, այդ արիւնահեղ ընդհարումները չը թոյլ տալու նպատակով, առ այժմ ոչինչ չէ լսվում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արէշի գաւառի Երմանի-Բազար գիւղի Տէր-Եղիշէ քահանայ Տէր-Եղիազարեանցը փետրվարի 6-ին ներկայացել է Գանձակի գեներալ-նահանգապետ Ալֆթանին և միջոցներ խնդրել ազատելու Արէշի գաւառի գերի հայերին։

Վեց հայ գիւղից ներկայումս գերութեան մէջ են մօտ 80 հոգի։ Կան նրանց մէջ մահմեդականացրած հայեր։ Մի քանի աղջիկներ և կանայք վերցված են կնութեան։ Անչափահասներին ընտելացնում են մահմեդական կրօնին։

Գեներալ-նահանգապետը հարց ու փորձ է արել մանրամասնօրէն, բայց դեռ որոշում չէ կայացրել գերիներին ազատելու միջոցների մասին։

Գանձակ, 7 փետրվարի

Մի քանի օր սրանից առաջ Գանձակի երկաթուղային վօկզալից անհետացրած է, կամ ինչպէս Գանձակում ասում են, գողացված մի 15 տարեկան հայ պատանի։ Այդ մասին յայտնված է տեղական բարձր իշխանութեան, բայց ոչ մի դրական հետեւանք չէ ստացվել։

Թուրքերը սպառնում են վօկզալի մօտ եղած հայ խանութպաններին, որ իրանք այնտեղ չը մնան, այլապէս նրանց կեանքը կենթարկվի վտանգի։ Հայերը գանգատվել են իշխանութեան, բայց պատասխան են ստացել թէ երևի հայերը մի որ և է առիթ տուել են, որ Թուրքերը այդպիսի սպառնալիք են անում։

Զարդախլու 1 փետրվարի.

Գերութիւնից նոր ազատված օրիորդ Շահնազարեանը պատմում է, թէ Գետաբէկին մերձակայ Սիսկենլու կոչված այրումների մօտ գտնվում են դեռ ևս հետեւեալ գերիները, որոնց մասին մինչև այժմ տեղեկութիւն չը կար։ Ստեփան Գասպարեան Բաղդասարեանց, 6 տարեկան. Թուրքերը թլփատել են սրան։

Օր. Վարդանոյշ Սարգսեան Յակոբեանց, գետաբէկցի, 16 տարեկան։

Անոյշ Մելիքեան Ադամեանց, չարդախլուեցի, Գետաբէկում բնակվող, 14 տարեկան։

Տ. Նինա Գասպարեան Օդաբաշեանց, գանձակեցի, 20 տարեկան։

Օր. Վարսենիկ Սարգսեան Յակոբեանց 16 տարեկան։

Այս գերիները մինչև այժմ սպանված էին համարվում։ Հրաւիրում ենք նրանց վրա ուշադրութիւն դարձնել։

Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովին, որ բարեհաճել էր 1500 րուբ. փող ուղարկել սովեալ գաղթականների համար հաց գնելու։ Շնորհակալութեան արժանի է և մեր փոխանորդ Կորիւն վարդապետը, որ մեր խնդրանօք միջնորդել էր ոչ միայն նպաստ ստանալու, այլև ալիւր գնելով Գանձակից աջակցութիւն էր ցոյց տուել տեղս հասցնելու և ամեն հոգածութիւն տանում է չքաւոր գաղթականների մասին։ Շնորհակալութեան արժանի են և Թիֆլիսաբնակ մեր հայրենակից երիտասարդները, որոնք մի ֆուրգօն ալիւր են ուղարկելու չքաւորներին բաժանելու համար։

Բաղից գաղթածները, որոնք սկզբում 1200-ից աւելի էին, ցրվել են զանազան գիւղեր, բայց դեռ ևս 350-ից աւելի կան, որոնց մեծամասնութիւնը հիւանդներ են և որբեր, որոնք դեռ ևս խնամքի կարօտ են։

Նոյեմբերի 18-ից սկսած մեր ճանապարհը դէպի Գանձակ լինում է սարի գիւղերով, այն ևս ամենամեծ դժուարութիւններով, որովհետև դէպի Դալլար կայարանը պէտք է գնալ Թուրքերի գիւղերով, ուրեմն կարելի է երևակայել թէ ներկայ հանգամանքներում, երբ հայը միայնակ ինքն իրան բաղդի կամքին է յանձնված, հնարաւոր է մեզ, անպաշտպան հայերիս համար, Թուրքերի միջով ճանապարհորդել։

Գիմ.

Խանլուխլար, (Շարուրի գաւառ) յունվարի 29-ին.

«Շարուրի հայ-Թուրքական ընդհարումներից յետոյ լրանում է ութ ամիս ժամանակամիջոց, բայց կեանքը իր սովորական շաւղի մէջ չէ մտել. օրից օր յուզմունքը աւելի և աւելի սաստկանում է ու սպառնում է մեծ վտանգ։ Երեկ յունվարի 27-ին, ցերեկվայ ժամը 3-ին, մօտ 150 հոգի զինված Թուրքեր, Իբադուլլահ և Ղշլաղբաս Թուրք գիւղերից ուզում են յարձակվել կիսաւերակ Վարմազեար հայ գիւղի վրա, ժողովրդին իսպառ բնաջինջ անելու նպատակով։ Բարեբախտաբար, այդ նկատում են երկու տեղացի հայեր, որոնք մի և նոյն միջոցին իրանց սեփական ծառերից ցախ են պատրաստում տեղական պահակների համար։ Թողնելով իրանց աշխատանքը, իսկոյն յայտնում են դէպքը պահակների գլխաւորին։ Առանց ժամանակ կորցնելու տեղական պահակախումբը շտապում է ֆանատիկոս Թուրքերի յարձակման առաջը առնելու։ Սկսվում է երկու կողմից հրացանաձգութիւն։ Պահակների մի քանի զալպ տալուց յետոյ, Թուրքերը յետ են քաշվում, տանելով իրանց հետ մի քանի վիրաւորներ։ Հետեւեալ օրը պ. պրիստաւը կազմում է արձանագրութիւն և այնպէս է դուրս բերում, որ դա հայերի կողմից անշուշտ մի «շուտկ» է։ Երբ արդեօք պիտի խաղաղվի, մեր գաւառի կեանքը մտնի իր սովորական շաւղի մէջ։ Այն—ժամանակ, երբ կը մաղթենք պ.պ. Սկրիբնիկովին և Մամլաշվիլիին բարի ճանապարհ։

Յունվարի 28-ին Նորաշէն կայարանում մի խումբ զինված Թուրքեր Ենկիջու գիւղից յարձակվում են Ուլուխանլու-Ջուլֆա գնացող գնացքի վրա, խլում են հայ զինուորներից երկու հրացան, բայց բարեբախտաբար մահվան դէպքեր տեղի չեն ունենում։

Լսում ենք, որ գաւառապետ իշխան Ջերբեզովը արձակուրդ ստանալով թողնում է իր պաշտօնը և հեռանում է Շարուրից։ Այժմս արիւնոտ Շարուրը, իր հրդեհված, թալանված տներով և կիսամերկ ժողովրդով իր վերջին հրաժեշտն է տալիս պ. գաւառապետին, գնաս բարեաւ, բարի ճանապարհ մաղթելով։

Մ. Ժամհարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մովսէս գիւղ, Շամշադինի վիճակ, յունվարի 26-ին։ Յունվարի 23-ին Թուրքերը վառեցին Զօրաթան գիւղի անասնանոցների խոտի դէզերը, որից յետոյ սկսեցին հայերի վրա հրացաններ արձակել։ Հայերը նոյնպէս հրացան արձակեցին. վառած դէզերի լոյսը հասել էր մինչև Ջուլալի, Ղզլի և Մովսէս հարևան գիւղերը։ Երեք ժամ տևող հրացանաձգութիւնից յետոյ, դադարեցին և Թուրքերը օգտվելով գիշերային խաւարից, առանց վնասի յետ քաշվեցին և ազատվեցին օգնութեան հասնող շրջակայ գիւղերի պահապաններից։

Յունվարի 25-ի գիշերը, ժամի $9^{1}/_{2}$-ին, Թուրքերը կրակեցին Նորաշէն գիւղի այգիների չափարները և խոտերը։ Կրակելուց յետոյ Թուրքերը սկսեցին զալպ տալ Մովսէս գիւղի դիրքերի վրա. հայերը նոյնանման պատասխանեցին։ Հրացանաձգութիւնը տևեց մինչև գիշերվայ 1-ի կէսը։ Հայերը չը վնասվեցին, իսկ Թուրքերի կողմից յայտնի չէ։

Յունվարի 26-ին առաւօտեան 9 ժամին Մովսէս գիւղի դիրք պահողները նկատեցին ձիաւոր Թուրքերի ահագին հոսանք, որը առաջ է շարժվում Քօսալար գիւղի վրա, Թուրք խուժանը առաջ գալով յարձակվեց յիշեալ գիւղի վրա։ Հայերը պաշտպանողական դիրք բռնեցին և սկսվեց սոսկալի ընդհարում։ Թուրք հեծեալ խումբը, որի թիւը հասնում էր մօտ 5—6 հարիւրի—նեղեց հայերին, բայց հայերի յամառ դիմադրութիւնից և Թուրքերի ձախ թևի վրա Մովսէս գիւղից հասնող օգնութիւնից սոփված Թուրքերը յետ քաշվեցին, կորցնելով երկու Թուրք, որոնք սպանվեցին Քօսալար գիւղի դիրքերի մօտ, գիւղից $^{1}/_{2}$ վերստ հեռաւորութեան վրա։

Յունվարի 27-ին, Մովսէս գիւղի դիրքերից նկատեցին ահագին քանակութեամբ Թուրք հրոսակախմբեր, որոնք կարգ-կարգ բաժանված առաջ էին գալիս դէպի հայ գիւղը։ Նրանց մեծագոյն մասը ձիաւոր էր։ Մօտենալով Մովսէս գիւղի դիրքերին, նրանք անմիջապէս ուժեղ կրակ բացին Մովսէս գիւղի պահապանների վրա, ուր և հանդիպեցին դիմադրութեան։ Երեք ժամ տևող սաստիկ հրացանաձգութիւնից յետոյ, թշնամին յետ նահանջեց. հայերը անվնաս մնացին, իսկ թուրքերի կողմից անյայտ էր: Թուրքերի թիւը մի քանի հարիւրի էր հասնում, իսկ հայերը ընդամենը 28 հոգի էին:

Ամսիս 29-ին, Օգուղլուի կողմից դարձեալ թուրքերի անդադրում շարժում սկսվեց դէպի Մովսէս գիւղը. նրանց 5—6 հարիւրից կազմված հեծեալ խումբը երկու մասի բաժանվեց և յարձակվեցին երկու կողմի վրա, իսկ նրանց հետևում էին նրանցից թւով ոչ պակաս հետևակ մարդիկ: Թուրքերը առաջ հասա-հասա, իսկ յետոյ միասին կրակ բացին հայերի վրա, որին հայերը իրանց կողմից կարելին չափ զգալով պատասխանեցին իրանց դիրքերից: Թուրք ամբոխը կամենում էր շրջապատել մեր տղերանց, բայց մերոնք արդէն առաջն առել էին. նրանք մի անգամ ևս կարծես մի վերջնական գրոհ տուին հայերին և փորձեցին դուրս անել, իսկ հայերը վճռած էին դուրս չը գալ դիրքերից, որպէս զի չը քաջալերվին թուրքերը և գիւղը կրակին, որ շատ հեռու չէր քան 1½ վերստ: Թուրքերի գերազանց ույժերի բոլոր ջանքերը հայերի խոհեմութիւնը ի դերև հանեց, և վերջապէս յուսահատվելով թուրքերը փախուստի դիմեցին: Հայերը նրանց չը հալածեցին: Թուրքերից սպանվեցին մի քանի ձիեր և ըստ երևոյթին երկու մարդ: Թուրքերը մի ակնթարթի մէջ փախցրին իրանց ընկածների դիակները: Հայերը անվնաս են: Ընդհարումը պատահեց հայերի հանդումը, գիւղից 1½ վերստ հեռաւորութեան վրա:

Կրիտիկական է ժողովրդի դրութիւնը, նա բոլորովին զրկվել է ամեն տեսակ աշխատանքից, որից քայքայվում են նրա նիւթական ույժերը: Ենթադրվում է անասունների սով, որովհետև թուրքերը կրակեցին բոլոր դաշտերի դէզերն ու անասնանոցները, և բացի այդ, աւերված Ջինարի գիւղի անասուններն իրանց ձմերային պաշարից զրկված աւելացել են միւս գիւղերի վրա: Երկու ամսից ի վեր նաւթ բոլորովին չը կայ, զգալվում է մանաւանդ աղի պակասութիւնը:

Ամեն րոպէ սարսափահար ժողովուրդը ենթարկվում է նորանոր պատահարների. համարեա ամեն օր սկսել են յարձակվում գործել թուրքերը մեզ վրա վերջին օրերս, իսկ ամենից շատ վտանգի մէջ է Մովսէս գիւղը:

Բ. Բաղդասեան

—

Ղափան, Ղաթարի գործարաններ, 20 յունվարի: Թուրքերը յարձակվելով Ցաւաջաձոր գիւղի «Փաշա-Քանդ» անուանեալ բինաների վրա, քշում տանում են 120 ոչխար, սպանելով այնտեղ գտնվող հինգ ոչխարածներից մէկին, մաս-մաս կտորում են դիակը, վերցնելով իրանց հետ ձիերը և գանգը, իսկ մնացած չորսին միմեանցից կապելով տանում են իրանց հետ, բայց ճանապարհին մի կերպ խորամանկութեամբ կտրում են թոկը և փախչում ազատվում: Հայերը լռում են, ոչինչ չեն անում: Չանցած մի քանի օր, թուրքերը յարձակվում են Մողէս հայաբնակ գիւղի վրա. փոքրիկ գիւղի բնակիչները, տեսնելով իրանց վտանգաւոր դրութիւնը, վերցնում են կանանց ու երեխաներին ու փախչում մօտակայ հայաբնակ գիւղեր: Թուրքերը ներս են մտնում գիւղը, թալանելով բոլորը, հրդեհում են տները, գիւղում մնացած խոտն ու դարմանը և հեռանում:

Յունվարի 5-ին, հանքատէր պ. Մէլիք-Ադամեանցի ծառաները սայլերով հանքերից պղնձաքար էին տանում գործարանը. յանկարծ յարձակվում են նրանց վրա 20-ի չափ զինված թուրքեր և արձակելով սայլերից 7 ընտիր ձիեր, խլելով ծառաների մօտ գտնվող երկու հրացանները, վերցնում են ու հեռանում:

Այսպիսի դէպքեր ու սպանութիւններ շատ և շատ են եղել, որոնց մասին իր ժամանակին յայտնված է տեղական ոստիկանութեան, բայց վերջինի կողմից ոչ մի կարուկ միջոցներ ձեռք չեն առնված: Երէկ տեղեկութիւն ստացանք թէ մեծ թւով թուրքեր պաշարել էին Աէյվա գիւղը. հայ քաջերը լաւ դիմադրութիւն են ցոյց տալիս, որից յետոյ թուրքերը մի քանի զոհեր տալով հեռանում են: Այս բոլոր դէպքերին ոստիկանութիւնը ականատես է, բայց էլի հայերին է մեղադրում. ասում է հայերը միշտ նախայարձակ են լինում:

Սողոմոն Յովհաննէսեան

—

Եղուարդ (Երևանի նահանգ), փետրվարի 6-ին: Յունվարի 28-ին Եղուարդի միդասեան դպրոցի ուսուցիչների նախաձեռնութեամբ տրվեց մի երեկոյթ, որը սպասածից աւելի հասարակութիւն գրաւեց: Եղուարդը վանքապատկան գիւղ լինելով, հասարակութիւնը, պէտք է ասած, որ այդ շրջանում անհամեմատ աւելի հարուստ է, քան միւս շրջակայ գիւղերում: Պարապմունքը զուտ երկրագործութիւնն է (ցորեն և գարի): Ցաւելով պէտք է ասել, որ ուսումն ու կրթութիւնը դեռ այնքան մօտ չեն Եղուարդի հասարակութեան սրտին և նրա պահանջների կարգը չեն անցած: Իրօք, դպրոցները յանձնվելուց յետոյ բացված է այստեղ հայոց եկեղեցական ծխական դպրոց, բայց նա այնքան անմխիթար դրութեան մէջ է, որ մարդ ուղղակի սրտի ցաւով է նայում այն հասարակութեան վրա, որը իր սրբազան պարտքը պիտի համարէր սիրով կպչել դպրոցին և հէնց այդ էր պատճառը, որ տեղիս ուսուցիչները, կրելով դժուարութիւններ ու նեղութիւններ, կարողացան գլուխ բերել այդ երեկոյթը, որի միակ նպատակն էր կապ ստեղծել սասած հասարակութեան ու դպրոցի մէջ:

Օգտվելով առիթից, աւելորդ չեմ համարում յիշել, որ հայ-թուրքական անմիտ կոտորածները այս կողմի երկու ազգութիւններին լարված դրութեան մէջ են պահում և չը նայած Ուշիի անցեալ տարվայ զօրեղ ընդհարումից յետոյ ոչ մի լուրջ դէպք տեղի չէ ունեցել, նրանից սակայն մինչև այսօր յարաբերութիւնները կտրված են ու երբեմնակի սպանութիւններ ու կողոպուտի դէպքեր են տեղի ունենում: Հաւաստի պատմում են, որ Բշնի վանքապատկան գիւղը, որի բնակչութեան կէսը թուրքեր են, պատրաստութիւն են տեսնում, մի ինչ որ աւազակ Իսկէնդէր-բէգի նախաձեռնութեամբ, նոր ու նոր կոտորածներ ու աւերմունքներ առաջացնելու համար: Մօտ օրերս սպանված են Բշնիցի երեք թուրքեր, երկուսն էլ Արշաքանդ գիւղից և այս դէպքը աւելի ու աւելի է յուզել շրջակայ ազգաբնակութիւնը, այնպէս որ հեշտ կարելի է ենթադրել, որ գարնան սկզբներին, գետինը սևանալուն պէս, մեր շրջակայքը կարող է հանդիսատես լինել կոտորածների ու աւերմունքի: Սարսափ է տիրում հայերի մէջ, ինքնապաշտպանութեան գործը շատ դանդաղ է առաջ գնում: Հայ գիւղացին չէ կարողանում հաշտվել այն մտքի հետ թէ կարելի է անընդհատ կերպով սպանել ու թալանել հարևան թուրքին, որը երկար տարիների ընթացքում եղել է դրկից, ընկեր-հարևան: Եւ դեռ կան օրգաններ ու հասարակութեան միտքը ղեկավարող անհատներ, որոնք մինչև հէս են լինում ապացուցանելու, թէ հայերն են մեղաւոր, մենք ենք նախայարձակ եղողը, մենք ենք անհանգիստ տարրը:

Դարերի ընթացքում հայերի թափած անմեղ արիւնը թող գնայ մի անգամ էլ համոզելու շովինիստներին ու «վարագոյրի ետևից» գործող հրապարակախօսներին, որ հայը կուլտուրային մօտ մի փոքրիկ ազգ լինելով հանդերձ, երբեք չէ ցանկացել եղբայրասպանի ու խռովարարի դեր կատարելու: Ամօթ է:

«Մշակի» վերջին համարում № 7-ում Գանձակի թղթակից Ս. Տէր-Աւետիքեանի «բացարձակ յայտնութիւն» վերտառութեամբ յօդուածը խոր, ցաւալի ու յուզիչ տպաւորութիւն թողեց տեղիս հասարակութեան վրա:

Սարսափելի է, ինչ կը բերի գարունը անպաշտպան հայերիս գլխին. գուշակել դժուար է:

Ուսուցչուհի օր. Վ. Վրացեան

ՄԱՄՈՒԼ

«Право» լրագրի վերջին համարում պ. Գրիմմ բնորոշելով Ռուսաստանի ժամանակակից դրութիւնը, գտնում է, որ նրա գլխաւոր սարսափը—ոչ թէ կառավարչական ռէակցիայի մէջ է, որ իր անգթութեամբ յիշեցնում է Արակչէևի և Շէվկովսկու հին ժամանակները, այլ նրա մէջ, որ մի փոքր առաջ ազատագրական շարժման նպաստող հասարակութեան մի մասը այժմ պառակտվել է նրանից և ոգևորում է այն միջոցները, որոնցով կամս Վիտտէի մինիստրութիւնը փորձում է զսպել յեղափոխական շարժումը երկրի մէջ: Այդ պառակտումը երէկվայ դաշնակիցների մէջ հեղինակը բոլորովին բնական է համարում և բացատրում է մի կողմից նրանով, որ ազատագրական շարժման աւելի չափաւոր տարրերը գոհացան հոկտեմբերի 17-ի մանիֆեստով և հաւատացին կառավարութեան դիտաւորութիւնների անկեղծութեան, իսկ միւս կողմից—բուռն շարժման բնաւորութեամբ, որ հոկտեմբերի 17-ից յետոյ սկսեց հետզհետէ աւելի սօցիալիստական դառնալ: Բայց, համարելով այդ պառակտումը բնական, պ. Գրիմմը չէ կարծում, որ նա կարողանայ երկար տևել. ինքն կառավարութիւնը դարձեալ առաջ կը բերէ նախկին դաշնակիցների միութիւնը:

«Յեղափոխական խմորման զսպումը յանուն հոկտեմբերի 17-ի մանիֆեստի կարող էր աջողութիւն ունենալ: Բայց ոչ մի տեսական աջողութիւն չէ կարող այն ռէակցիան, որ կամենում է պաշտպանել քաղաքացիական ազատութիւնները և «անձնաւորութեան իրական անձեռնմխելիութիւնը» գնդակներով և դահճի խարազաններով: Եթէ հոկտեմբերի 17-ի մանիֆեստը առաջացրեց ներկայ կարգին թշնամի կօալիցիայի կործանումը, ուրեմն այժմ տիրող վայրենի ռէակցիան անխուսափելիօրէն պէտք է ի մի համախմբէ ընդիմադիր ույժերը: Կառավարութիւնը, որ լռում է և դրսից խրախուսում «քաղաքացիների» գնդակահարութիւնը առանց դատաստանի՝ պատրաստ ցուցակներով—այդպիսի կառավարութիւնն ոչ մի դէպքում և բնաւ չէ կարող յոյսը դնել ժողովրդի վստահութեան վրա»:

Մի բան պարզ է՝ այդ այն է, որ եթէ ընդդիմադիր կուսակցութիւնների միութիւնը կայանայ, դրա մէջ մեղաւոր կը լինի կառավարութիւնը, որ իր կողմից ամեն բան անում է, որպէս զի միացնէ իր դէմ բոլոր այն տարրերը, որոնց համար հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հռչակած սկզբունքները իրապէս փոքր ի շատէ թանգ են:

*

Նոյն խնդրի, այն է Ռուսաստանի ժամանակակից վիճակի մասին, խօսում է և «Рус. Вѣд.» լրագիրը:

«Կարելի է կարծել, ասում է նա, որ նշանակված է համառուսական կօնկուրս սահմանելու համար մրցանակ ամենաշատ անօրէնութեան մասին: Այդ ուղղութեամբ գործող զարմանալի աջողութիւնների այնքան օրինակներ ենք ունեցել, որ կարծում էինք, թէ առաջնութեան դափնին արդէն ձեռք է բերվել և աւելի հեռու գնալ անկարելի է: Բայց իրականութիւնը գերազանցում է այն ամենը, ինչ որ կարելի էր սպասել: Դեռ նորերս Կելցի ընդհանուր-նահանգապետը յայտնեց, որ նա առանց դատարանի մահվան պէտք է յանձնէ ամեն մի մարդու, ում մօտ կը գտնվի զէնք, իսկ անչափահաս երեխաների փոխարէն (մինչև 14 տարեկան) պէտք է մահվան պատժի կրեն ծնողները: Սպանել հօրը ու մօրը նրա համար, որ 13 տարեկան մի մանչ թաքցրել է մի ատրճանակ—դա արդէն բաւական մեծ աստիճան է օրէնքը ջնջելու ասպարէզի վրա և դրանից աւելի վերև բարձրանալ անկարելի է: Սակայն այժմ Ռուսաց Հեռագրական Գործակալութիւնը ծանօթացնում է մեզ Թիֆլիսի նահանգի Գորի և Դուշէթ գաւառների ընդհանուր-նահանգապետ Բաուէրի հրամանագրի հետ, որի առաջ նոյն իսկ Կելցի ընդհանուր-նահանգապետի հրամանը ոչինչ է»:

Ապա լրագիրը առաջ է բերում Բաուէրի այն հրամանագիրը, որի մասին արդէն գրված է «Մշակում» և որի մէջ ասված է, թէ «եթէ մի գիւղում հրամանի յայտնվելուց յետոյ կը մնայ կամաւորապէս չը յանձնված թէկուզ մի հատ հրացան, մի հատ ատրճանակ, խէնջալ և ուրիշ զէնք, թէկուզ մի հատ յանցաւոր, թէկուզ մի հատ նորակոչ զինւոր, որ իր ժամանակին չը գայ, թէկուզ մի հատ հարկ չը վճարված, թէկուզ օրէնքով չը ճանաչված մի հասարակ իշխանութիւն—այդպիսի գիւղը նա կուղարկէ զօրք, ոչ թէ էկզէկուցիայի համար, այլ միայն այն նպատակով, որ հիմքից քար ու քանդ անեն այդ գիւղը»:

Կարդալով այդպիսի հրամանագիր, ասում է լրագիրը, մարդ իրան զգում է Միջին Դարերում, 1208 թ. Իննովկենտ III պապը մի նուիրակ ուղարկեց հերետիկոս ալբիգոյցիների դէմ կռւելու համար. այդ նուիրակը մի խօսք ասաց, որ դարձաւ կլասիքական. «Ջարդեցէք ամենքին, իսկ այն միւս աշխարհում ինքն Տէր Աստուածը կընտրէ անմեղներին յանցաւորներից»: Այժմ, ուղիղ 7 դարից յետոյ մենք գրեթէ համանման խօսք ենք կարդում Բաուէր նահանգապետի հրամանագրի մէջ»:

ՏԱՐԵԴԱՐՁԸ

Այսօր Բաքուի կոտորածների տարեդարձի առթիվ հոգեհանգիստ է կատարվում մեր երկրի զոհերի յիշատակին:

Լրացաւ տարին, սև տարին:

Հազիւ լռել է փոթորը: Երկարատև կը լինի խաղաղութիւնը: Դժուար է պատասխանել:

Դժուար է պատասխանել, որովհետև երկու դժբաղդ ժողովուրդներից անկախ, նրանց կամքի վրա իշխում է մի եղերական իրականութիւն: Եւ նրա տակ գործում դժոխային դաւը: Այդ իրականութիւնն էր, որ արձակեց միմեանց վրա երկու սովյած ժողովուրդներին, այդ իրականութիւնն էր, որ պահանջեց այդքան արիւնքներն ու այդքան սուգերը:

Այդ իրականութիւնն էր, որ իբրև ժամանակակից Կատոն, լափեց երկու ազգերի թանկագին զաւակներին:

Այսուհետև նա կը խղճայ մեզ՝ հայերիս և թուրքերիս: Ամենքիս:

Ամենքին, եթէ այդ է նրա շահերի հրամայողական պահանջը:

Տրտնջալ, մեղադրել:

Աւելորդ է:

Կեանքի ընթացքը մազաչափ անգամ չի շեղվի լոկ տրտունջով ու մեղադրանքով:

Չի շեղվի, որովհետև շահերի հակընդդէմ կռիւը չէ հպատակվում վերացական սկզբունքներին, որքան որ էլ նրանք լինեն գեղեցիկ ու վեհանձն:

Պէտք է կանգնել դրական հողի վրա:

Ո՛չ բողոք, ոչ տրտունջ, ոչ մեղադրանք: Այլ գործ:

Հակայեղափոխութեան շահը պահանջում է, որ մենք պատառոտենք միմեանց: Իսկ մեր շահը՝ որ ապրենք եղբայրաբար:

Գործենք ուրեմն այդ ուղղութեամբ:

Թուրք ամբոխը այս՝ տխրօրէն անմոռաց աղէտքում, եղաւ այն դանակը, որ գործ են ածում այս կամ այն ոճրագործ նպատակի համար:

Աշխատենք խլել այդ դանակը չարագործների ձեռքից: Կամ գոնէ բթացնենք:

Բթացնենք, հասկացնելով թուրքին, որ նա երկսայրի է և վիրաւորում է իրան աւելի խորը, քան հային, որի դէմ ուղղված է:

Ահա միակ միջոցը՝ աղէտքի կրկնութեան դէմ:

Ճիշտ է, դժուար է գործը, բայց միմիայն նրանից է կախված Կովկասի խաղաղութիւնը:

Այնպէս որ մի սխալ, ճակատագրական սխալ կը լինէր գնել երկու ժողովուրդների մէկուսացման, անջատման հարցը:

Ընդհակառակը, եթէ մեկուսացած լինէինք, աւելի հաստատակամութեամբ պէտք է պահանջէինք այժմ միանալ, խառնվել միմեանց:

Միանալ, խառնվել՝ թուրք պարիա ամբոխի հոգու մէջ վառելու գիտակցութեան կանթեղը:

Միանալ, խառնվել՝ թուրք գիւղացիութեան և բանւորութեան մտքի մէջ խարսխելու՝ իր իսկական շահերի ըմբռնումը, համաձայն եղբայրութեան, քաղաքակրթութեան և սօցիալական արդարութեան իդէալի:

Սա ներկայի անյետաձգելի պահանջն է:

Այս է թելադրում մեզ մի տարվայ արիւնոտ դասը:

Դարձեալ կրկնում ենք, գործը դժուար է, բայց ոչ անկարելի: Բայց մանաւանդ ստիպողական:

Եթէ այսօր չըկատարենք, վաղը ստիպված պիտի լինենք կատարելու. աւելի լաւ է, որ մի ժամ առաջ կատարենք:

Քանի թուրքութիւնը մեր առաջ կանգնած է իբրև խաւարի մի հրէշաւոր, անթափանցելի սևին, մի վիթխարի, մռայլ ապառաժ, մենք չը պիտի ազատվենք երբեք մեր գլուխը նրան խփելու և ջախջախելու դժբաղդութիւնից:

Մենք ապրել ենք, ապրում ենք նրանց հետ, նրանց մէջ: Եւ ճակատագրի անդառնալի վճռով պիտի ապրենք, որքան կանք: Հետևաբար հասկանանք նրանց, հասկացնենք մեզ նրանց: Կռանանք նրանց տգէտ, սառնված, երկչոտ ու վայրագ հոգու վրա, և բարձրացնենք նրան դէպի լուսաւոր իդէալները:

Այդ է պահանջում ոչ միայն Կովկասի, այլ և ամբողջ հայութեան շահը:

Էլ ուրեմն ինչու մենք մեզ տալիս ենք կուլտուրական ու խելօք ժողովուրդի վկայականներ:

Էլ ուրեմն ինչու ընդունում ենք զարգացած, գիտակից, քաղաքակրթութեան զինւոր ազգի խրոխտ ու հոյակապ դիրքեր:

Թուրքերին հաղորդակից անել նոր կեանքի իդէալին, այդ հրամայում է և՛ քաղաքակրթութեան զինւորի մեր յաւակնութիւնը և մանաւանդ մեր անմիջական շահը:

Բայց ինչ անել, ինչպէս անել:

Մօտենալ հէնց այժմեանից թուրք ժողովուրդի գիտակից ու բարեացակամ տարրերին և ձեռք ձեռքի գործել:

Ընտրենք մի խառն մասնաժողով, որը զբաղվի մեզ միմեանց մօտեցնող մի շարք ձեռնարկութիւններով. գուցէ նպատակայարմար դատէ հիմնել նախ մի լրագիր, հայ-թուրքական: Կազմէ թատերական խառն խմբեր, որոնք շրջեն գաւառից գաւառ, գիւղից գիւղ, դասախօսութիւններ ամեն տեղ. հրատարակէ ժողովրդական գրքեր և գրքոյկներ:

Վերջապէս բաց անենք թուրք ժողովուրդի առաջ կեանքի մի նոր դարագլուխ:

Ահա այս է արիւնոտ տարեդարձի գործնական դասը:

Ահա այս գործունէութեան սկիզբը դնելով է որ միայն մենք պիտի կարողանանք խաղաղ ասել.

— Հանգիստ ձեր ոսկորներին բռնութեան ու տգիտութեան թշուառ զոհեր:

Տ. Զաւէն

ՄԵՐ ԱՐԻՒՆՈՏ ՆԵՐԿԱՅԻ ԱՌԻԹՈՎ

Փետրվարի 6-ին բոլորեց մեր սոսկալի իրականութեան արիւնոտ ամեակը, սև տարեդարձը:

Մի ամբողջ տարի է Կովկասի հայութիւնը զոհ է դառել հրէշաւոր դաւադրութեան, մատնված անխիղճ հալածանքի, զրկված իր հայրենի վառարանից, ենթակայ ասպատակութեան, կապուտ խաղաղութեան ու կուլտուրական քրտնաջան աշխատանքի: Եւ ինքնապաշտպանութեան զէնքը ձեռք առած՝ նա մինչև այսօր էլ սպասում է իշխանութեան անաչառ ձայնին ու անխախտ հաւատում է արդարութեան յաղթանակին...

Սակայն ո՞ւր է նա և ի՞նչ տեղ որոնենք:

Արդեօք Բաքուի խրար յաջորդող երեք ջարդերի մէջ, Նախիջևանի հրէշաւոր սպանդանոցում, Շուշու դաւաճանական հրդեհներում, Մինքենդի, Կրզանի, Բաղդայի և այլ անպաշտպան հայ գիւղերի աւերակ բաղնիքներում, թէ Ղարաբաղի հայ գիւղերի ամբոխածութիւնների մէջ: Ինչո՞ւ են անմեղ, խաղաղարար հայերին բանտարկում, իսկ թուրք ոճրագործներին հովանաւորում: Ինչո՞ւ են ինքնապաշտպանութեան հայ խմբերը զինաթափ անում, իսկ թուրք աւազակներին խրախուսում: Ո՞ր մանիֆեստով են Դալի-Ալիները ազատութիւն ստանում նահանգական քաղաք մտնելու և ջարդեր կազմակերպելու: Ինչո՞ւ հայերի մի անմեղ քայլը սպառնալիք է հռչակվում, իսկ թուրքերի զինվելը քօղարկվում: Ինչո՞ւ հայ եկեղեցին զէնքի շտեմարան է կասկածվում, իսկ Գանձակի թուրքերի մզկիթում զէնքի պահեստ գտնվելու փաստը անուշադիր է թողնվում, մոռացութեան տրվում: Այդ անհաշտ ու բարդ տրամադրութեան մէջ որոնենք, թէ Կովկասեան միակողմանի քննութեան մէջ...

Ապա ո՞ւր է հետևանքը: Ե՞րբ վերադարձնեն մեր միլիօնաւոր վնասները: Ի՞նչով պատժեցին ջարդերի յայտնի հեղինակներին: Ի՞նչպէս բուժեցին մեր վիրաւոր սրտերը և մեր մտաւոր ու տնտեսական անանկութեան առաջը առան:

Ահա հէնց այստեղ, այդ անլուր ոճիրների մէջ պէտք է որոնել... որտեղ ապառաժ քարերն անգամ բողոքում են այդ հրէշաւոր դաւադրութիւնների ու դաժան անիրաւութիւնների դէմ, որոնց բացարձակ ու անպատիժ շարունակում են մասնակցել, նոյն իսկ գլխաւորել, իշխանութեան որոշ ներկայացուցիչները:

Եւ դա մի տարվայ գործ չէ, ժողովրդի յանկարծակի բռնկման արդիւնք չէ, այլ տարիների ընթացքում խնամքով մշակված մի ծրագիր, մի կազմակերպված դաւադրութիւն, որ ունի իր պատմութիւնը և որը իր յաջողութիւնը հիմնել է ռուսաց պետական հին ռէժիմի ու նրա դիպլոմատների կարճատեսութեան վրա, իսկ այսօրվայ արիւնոտ իրականութիւնը այդ հայակեր ուղղութեան արդիւնքներն են...

Բայց ի՞նչ էր մեր յանցանքը:

Արդեօք այն, որ կոյր չը գնացինք նրանց ձուլարանում: Որ մենք, մեր ազգային ինքնուրոյնութիւնը պաշտպանելով հանդերձ, աւելի ճշգրիտ էինք ըմբռնում ու աւելի յաջող առաջ մղում ռուսաց շահերը և կուլտուրական նուաճումները: Որ աւելի անկեղծ էր մեր համակրանքը դէպի ռուս ազգը և անխախտ մեր հաւատը դէպի մերձաւոր քրիստոնեայ պետութիւնը, որը և հայի նահատակութիւնների բուն սկզբնապատճառն է:

Ահա մեր յանցանքը, ռուսաց հին ռէժիմի հետևորդների—բիւրոկրատիայի և շովինիստ իդէօլօգների կարծիքով, հէնց դրա մէջ է կայանում, և անշուշտ այդ մեղադրանքի մէջ ահագին դեր են խաղացել կովկասեան ազնուականութեան որոշ ընտրեալներ, որոնք դէպի հայերը ունեցած անձնական ատելութիւնը քինախնդրաբար ու տմարդի կերպով պատուաստեցին բիւրոկրատական իշխանութեան բարձր շրջաններում:

Սուվօրինի, Կոմարովի, Գրինգմուտների ու Վէլիչկօների բերանով խօսող հին ռէժիմը մեզնից երախտապարտութեան հատուցում էր պահանջում: Մենք շնորհակալութեամբ պէտք է նետվէինք իր գիրկը, պաշտէինք նրան, որովհետև «հայերիս համար բարերար եղաւ, ազատելով մեզ գերութեան լծից: Ահագին զրկանքներով նա նուաճեց Կովկասը, մինչդեռ շահվում ենք միայն մենք, հայերս, և տնտեսական ու զուտ ազգային կուլտուրայի նուաճումների հետ միասին երազում էինք անջատման ու քաղաքական անկախութեան մասին»: Այսպիսի խակ անհիմն կասկածների վրա էր հիմնված ռուս շովինիստների հայակերութիւնը, որից և կազմվեց պետական սխալ քաղաքականութիւնը:

Ահա մեր այդ կուլտուրական ձգտումները փուշ էին դարձել, իսկ երազները ոչ ցանկալի, վտանգաւոր ռուսական շահերի համար... ու սկսվեցին ռեպրեսիւ միջոցները:

Սակայն դա դեռ բաւական չէր: Նա վճռեց մի ուրիշ աւելի ռէալ զէնքի դիմել, օգտվել այլացեղ ֆանատիկ տարրերից և այդ միջոցներով հաւասարակշռութիւն պահպանել, ապահովել քաղաքական կայունութիւնը:

Իսկ որ դա այդպէս է, որ այդ քաղաքական զէնքը վաղուց էր պատրաստված յայտնի է ամեն մի երևանցու: Ո՞վ չի յիշում «ազգասէրներ»-ի չար հռչակաւոր Շալիկօվին, որի հայատեացութիւնը այն չափերին հասաւ, որ սպառնում էր Միլլէթի թուրքերին ուղարկել հայերին կոտորելու: Ո՞վ չէ լսել նրա յետնորդ Ֆրէզէի մասին, որը նահանգապետ եղած ժամանակ Երևանում, շարունակ ատամ էր կրճտացնում հայերի վրա, և մինչև այն աստիճանին, որ Նախիջևանցի մի խան համարձակութիւն է ունեցել մի ճաշկերոյթի ժամանակ իր ծառայութիւնները առաջարկելու, կոտորած սարքելով, հայերին խելքի բերելու. իսկ նա իբրև թէ պատասխանել է. «դեռ ժամանակը չէ»:

Այդպէս է խօսում ժողովուրդը. անհիմն է արդեօք: Եւ այդ բոլորը վերաբերում է խեղճ ու կրակ հայ ազգի տխուր անցեալին. իսկ պատճառը Տաճիկ-Հայաստանի բռնկումները, Սասունի ապստամբութիւնը ու այնտեղի մեր եղբայրների կոտորածները:

Թուրքերի այդ տրամադրութիւնը վաղուց էր աչքի առաջ ունեցել ռուսաց հին ռէժիմը իր նպատակներին ծառայեցնելու համար, իսկ թուրքերին էլ փոխադարձաբար իրանց նպատակների համար: Եւ ինչպէս մեր հայրենիքն է դարերից ի վեր գտնվել խաչաձև կրակի տակ, այնպէս էլ մենք մեր խաղաղ կուլտուրական ձգտումներով ընկնում ենք խաչաձև կրակի տակ հակառակ մեր կամքի: Դա մեր ճակատագրական տխուր ժառանգութիւնն է:

Այդպիսով մեր ներկայ արիւնոտ դրամայի հողը վաղուց էր պատրաստված և թէ կառավարութիւնը, թէ թուրք տարրի ղեկավար ազնուականութիւնը մէկը ծայրահեղ ճգնաժամում, իսկ միւսը՝ նպաստաւոր հանգամանքներում պէտք է օգտվէին այդ ստեղծած դրութիւնից:

Այդ առիթը, ինչպէս յայտնի է, անցած տարի շատ յարմար ժամանակ ներկայացաւ: Կառավարութիւնը օգտվեց թուրքերի ծառայութիւնից մեզ մեկուսացնելու, ուժասպառ անելու, որպէս աւելի դեմօկրատ ու ազատատենչ տարրերի, իսկ թուրքը, կառավարութեան հովանու տակ, մեզ կոտորելու, տկարացնելու, որպէս խոչընդոտների, իր հեռաւոր քաղաքական նպատակներին կամ քաղաքական տենչերին հասնելու համար: Համերաշխ զինակցութիւն տարբեր նպատակների համար:

Դա դրամայի նախերգանքն էր ու նշանը, որ այժմ համաճարակի պէս բոցավառել է մեր բնակավայրերը:

Ահա մեր ներկայ արիւնոտ իրականութեան գաղտնիքը այդ վաղուց ստեղծված դրութեան մէջ պէտք է որոնել, հին քաղաքականութեան հայակեր դաւերի մէջ:

Իսկ մեր սօցիալիստ իդէօլօգների թուրք հայկական հակամարտութեան լուսաբանութիւնը ազգային, տնտեսական և դասակարգային տեսակէտներով միանգամայն անտեղի են, ու մտացածին:

Մենք զոհ ենք հրէշաւոր քաղաքականութեան. այդ պէտք է լաւ ըմբռնել և ոչ մի յոյս ոստիկանական-բիւրոկրատական հին ռէժիմի յետնորդների վրա մենք չը պէտք է դնենք, որովհետև հէնց նա է նպաստել մեր ներկայ իրականութեանը: Մեր միակ փրկութիւնը որոնենք ինքնապաշտպանութեան մէջ, մեր մտաւոր ու ֆիզիքական կորովի մէջ, իսկ բարեկեցութեան յոյսը վերանորոգված Ռուսաստանի սահմանադրական ժողովրդական ներկայացուցչութեան մէջ:

Դրանով միայն կարող ենք բուժել՝ արիւնոտ տարվայ պատճառած խոր վէրքերը և վերականգնել մեր վտանգված կուլտուրան: Ձգտենք համերաշխութեան և նպաստենք հնարաւորութեան չափ նրա շուտափոյթ իրագործմանը: Այդ է միակ ելքը, և թող դա էլ լինի ներկայ քաղաքական դաւանանքը:

Լ. Դանիէլեան

Ո՞ՒՐ ԳՆԵՆՔ

(Գանձակի կայարան: Նամակ խմբագրութեան փետրվարի 3-ին)

Ամենքին յայտնի է, թէ ում զրդմամբ թուրք ամբոխը Գանձակի ամբողջ նահանգի հայերի բոլոր շարժական կայքը կողոպտեց, իսկ անշարժը կրակի ճարակ դարձրեց: Բացի գիւղերից, Քիւրդամիր կայարանից մինչև Աղստաֆա կայարանը հայը ունէր խանութ, տուն, առևտուր, որով կառավարում էր մի կերպ իր ընտանիքը: Այդ բոլորը ոչնչացրվեց դահճի ձեռքով: Միայն Գանձակի կայարանն էր բացառութիւն կազմել, որը ինքնապաշտպանութեան շնորհիւ ազատ մնաց մեծ աղէտից: Գանձակի կայարանի հայերս, ուրիշ կործանված կայարանների ժողովրդի հետ, ապաստանվեցինք Գանձակի հայկական մասում, որպէս մի ապահով տեղում գոնէ կեանքը ազատելու համար:

Բայց ազատված կեանքը ախր հաց է ուզում, ուտել է ուզում և որտեղից ճարվի այդքանի համար գոնէ չոր հաց, երկնքից խոմ մանանայ չէ թափվում, վերջը չէ՞ որ պէտք է գործի կենալ, պէտք է աշխատանքի գնալ: Եւ ահա մտածեցինք մենք կայարանում ապրողներս վերադառնալ մեր գործին, որ ինչ է առանց մեզ էլ Գանձակի վզին ծանրացած բեռ չը լինենք, որ առանց դրան էլ կեանքը անտանելի է: Սակայն այժմ ո՞ւր դիմենք, երբ այստեղից էլ են հալածում մեզ: Եթէ հայի համար էլ, ինչպէս հրէաների համար, օրէնքով որոշված առանձին տեղ կայ, ցոյց տան մեզ, եթէ ոչ մեր հայրենի ծննդավայրից ինչու ենք հալածական: Տականքները խմբված, պրիստաւը առաջին, ամենաչնչին առիթը պատճառ բռնելով՝ պատահած հային բռնում, վագոն են նստեցնում, Աստուած գիտէ թէ ուր են տանում:

Ահա այդպիսի մի առիթից էլ երէկ օգտվեցին: Երէկ, ժամը 9-ին, մի ատրճանակի հարուածով սպանում են մի կօնդուկտորի և իսկոյն վեց վրացի են բռնում, բոլորը գոռում են թէ դրանք են եղել սպանողը, իսկ այսօր, առաւօտից սկսած, իւրաքանչիւր հարբած մուժիկի ցուցմունքով, բռնոտում են անմեղ առևտրականների, այնպիսի մարդկանց, որոնք մինչև անգամ գաղափար չունեն, թէ սօցիալիստն ինչ է և այլն: Պրիստաւը ինքն իր համախոհների հետ բացարձակ յայտնում է թէ կայարանում պէտք է հայ չը լինի և մի քիչ ուրիշ տառ, կայարան եկող հայն էլ բռնում է նետվում: Ապա ո՞ւր դիմէ լքված հայը. կայարանում բնակվող ռուսների վարմունքը մոռացնել է տալիս թուրքերի բոլոր բռնութիւնները: Փոխարէն հայրիկին գրած նամակի մէջ խոստանում է բարութիւն, այստեղ լրագիրներում կարդում ենք, ուրախանում, իսկ կեանքի մէջ բռնութիւն և միայն բռնութիւն ենք տեսնում: Կայարանից հային փայտոնով փախցնել կամեցող Մաշադի Սուլէյմանը (այժմ Սուլէյման բէկը) ակնոցները դրած, ազատ որսի է գնում, իսկ խեղճ հայը չէ կարողանում իր տասնեակ տարիների դառն քրտինքով ձեռք բերած տան մէջ հանգիստ քնել:

Երէկ, կէսօրից յետոյ, անյայտացել է մի հայի խանութում ծառայող 15—16 տարեկան երեխայ. նրա խօզէյինը այսօր գանգատվել է պրիստաւին: Համարձակութեան համար նրան էլ բանտարկեցին վագոնում շատերի հետ: Երբ հարցնում են, թէ դրանց մեղքը ինչ է, պրիստաւը պատասխանում է թէ պատրիօտները ասում են, որ կայարանում պէտք է հայ չը լինի:

Մեզ ո՞վ պէտք է առաջնորդէ, մեզ ո՞վ պէտք է պաշտպանէ, մեզ, ամեն կողմից հալածված հայերիս: Ո՞ւր դիմենք, ցոյց տուէք ճանապարհը. մեռնել չենք ուզում, ապրել ենք ուզում. ապրելու համար, ուտել ենք ուզում:

Կայարանի փախստականները՝ Յովհաննէս Տէր-Ստեփանեանց, Ա. Խուդիեանց, Ա. Գալուստեանց, Գ. Յոհաննեանց, Մ. Յոհանեանց, Ե. Լէվոնբէկեան, Զ. Յովհաննէսեան:

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Յունվարի 30-ին

Յունվարի 18-ին Սաբաթլու գիւղից մի հայ, Թէվոս Գրիգորեան, գնում է Կախ-Աւան գինի առնելու և երկու տիկ գինի գնելով վերադառնում է գիւղ: Ճանապարհին փոքրիկ Ղըլըղ-Լայխուռ գիւղի մօտ աւազակները յարձակվում են դրա վրա, խլում են ձին և, տիկը թողնելով մի տեղ, հեռանում են, իսկ հայը մի կերպ ազատվելով գալիս է գիւղ և յայտնում համագիւղացիներին: Գիւղի երիտասարդներից վեց հոգի, որոնցից մէկը ժամանակաւոր արձակուրդով տուն եկած զինւոր, գնում են աւազակների յետևից ձին և գինին յետ խլելու: Ամբողջ գիշեր հետամուտ են լինում, չեն գտնում ոչ աւազակներին և ոչ տիկերը, միւս օրը (19-ին) վաղ առաւօտեան գտնում են գինով լիքը տիկերը ու վերադառնում: Երբ հասնում են Կայա-Բաշի թուրքական փոքրիկ գիւղը, ճանապարհի աջ և ձախ կողմերում դարան մտած աւազակների մի կողմի խումբը ձայն է տալիս հայ տղերանց և ասում. «կանգնեցէք, ձեզնից ով մեզ ճանաչում է, թող գայ մեզ մօտ»: Մեր տղերանցից երկուսը—Մելիքն ու Աւետիսը տեսնելով աւազակների մէջ ծանօթ դէմքեր, գնում են նրանց մօտ, բարևում և մինչև անգամ համբուրվում ծանօթների հետ: Հէնց այդ ժամանակ աւազակները խլում են Մելիքի ու Աւետիսի ձեռքից հրացանները: Այդ տեսնելով ճանապարհի մէջ կանգնած հայ տղերանցից մէկը՝ Աբրահամը հրացանն ուղղում է դէպի աւազակները, սակայն մինչև սրա կրակելը աւազակներից մէկը կրակում է Աբրահամին և ձեռքից վիրաւորում: Աբրահամը թէև վիրաւորված, դարձեալ ուզում է կրակել աւազակների վրա, բայց այդ րօպէին ճանապարհի միւս կողմը դարան մտած աւազակները հրացանի մի քանի գնդակներով վայր են գլորում Աբրահամին և իր ձին: Այս շփոթութիւնից օգուտ քաղելով աւազակների մօտ եղող Մելիքն ու Աւետիսը հեծնում են իրանց ձիերը և երկու հոգով էլ աւազակների ձիաներից խլելով փախչում են: Թէև սրանց յետևից գնդակների տարափ է տեղում, բայց անվնաս ազատվում են և փախչում: Աբրահամի ընկնելուց յետոյ, սրա երեք ընկերներից մէկը ձին քշում է դէպի մօտակայ եղեգնուտը (ղամիշլըղ) և թաքնվելով ազատվում, իսկ երկուսը մազապուրծ փախչում են գիւղ մէշէի բակը, որ հեռու չէ դէպքի տեղից, բայց մէշէի բակը հասնելուն պէս օրը ցերեկով երկուսին էլ գիւղացի թուրքերը գնդակահար են անում:

Այսպէս վեց հոգուց երեքը սպանվում են, երեքը ազատվելով գալիս են գիւղ: Յունվարի 20-ին, երբ սպանվածների դիակները բերել էին գիւղ, ամբողջ գիւղը սուգ ու շիվանի մէջ էր: Երիտասարդութիւնը զինված վճռում է գնալ և աւերել յիշեալ թուրքի գիւղը, բայց հեռատես իշխանները թոյլ չեն տալիս, մտածելով, որ առիթ տուած կը լինեն Նուխում կոտորած առաջ բերելու, որտեղ հայերս սակաւաթիւ ենք և շրջապատված թուրքերով և կարող ենք տուժել, ըստ որում մինչև այժմ խաղաղ մնացած սիւննիները չէ կարելի հաւատալ, որ սառնասրտութեամբ կը տանեն Կայա-Բաշիի աւերումը, որքան էլ մեղաւոր լինեն այդ գիւղի թուրքերը, քանի որ թուրքերն առհասարակ ցանկանում են հայերը միշտ և ամեն դէպքում լռութեամբ տանեն ամեն տեսակ զրկանքներ, ինչպէս որ տարել և տանում են մինչև այսօր:

Գաւառապետը քաղաքումս գտնվող մի քանի տասնեակ դրագուն զօրքի հետ գնացել է Սաբաթլու և միւս թուրք գիւղերը:

Ցաւալի լուրեր են պտտում, որ Դալի-Ալին ահագին թիւ հրոսախմբով յարձակվել է ուզում վիճակիս հայ գիւղերի վրա: Հայ ժողովուրդը, մանաւանդ գիւղական հայ ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է:

Այսօր Ղայաբաշի գիւղից իմ ծանօթ քահանան ինձ գրած նամակն այս տողերով էր վերջացրել. «Մարդիկ հաստատ հաւատացնում են, որ Դալի-Ալին մեծ ույժով գալիս է հայ գիւղերը, աւելի հաստատ՝ Ղայաբաշու վրա. ի սէր Աստուծոյ, արեցէք ինչ հարկաւոր է»: Այս նամակը գրված էր յունվարի 29-ից:

Վերջերս քաղաքիս առաջաւոր հայերից և թուրքերից բաղկացած կօմիսիան, որ գնացել էր թուրք գիւղերը համոզելու, ոչ մի բարի հետևանքի չը հասաւ, միայն երկու թէ երեք օր ճանապարհներում կողոպուտներ չեղան, այնուհետև դարձեալ սկսվեցին: Ներկայումս դէպի Զաքաթալա և Եւլախ ճանապարհները խիստ անապահով են, համարեա ամեն օր ճանապարհորդները կողոպտվում են, լինեն նրանք ատրճանաւորներ կամ հասարակ մարդիկ:

Նամակս վերջացնում էի, որ եկաւ մի ղայաբաշեցի ինձ մօտ հետևեալ ուրախալի լուրը հաղորդելու: Ղայաբաշում գտնվող 30 հետևակ զինւորների երիտասարդ վրացի օֆիցէր Անտօնիյ Ալէքսանդրովիչ Բօրիսով սրանից հինգ օր առաջ վերցնում է Ղայաբաշուց 40 սայլ նոյնչափ նեմեթաբասցիներով, որոնք Արէշի աղէտից յետոյ փախել և ապաստան են գտել Ղայաբաշում, իր զինւորներից 10 հոգի և գնում է Նեմեթաբաս գիւղը, պահանջում է Արէշի նոր պրիստաւին, որ ուղարկէ 15 ստրաժնիկ: Պրիստաւը իսկոյն ուղարկում է 15 ստրաժնիկ: Օֆիցէրը կանչում է Նեմեթաբասի թուրքերին և հրամայում բերել և յանձնել հայերի իրանց պահ տուած ապրանքները: Թուրքերը, որոնք առաջ միանգամայն մերժում էին, այժմ ոմանք բոլորը ինչ իրանց յանձնվել է, տալիս են տիրոջ, իսկ ոմանք կէսը միայն, ասելով թէ կէսը Ղարաբաղից եկած թուրքերը տարել են, բայց և այնպէս 40 սայլ հայի ապրանք առնելով թուրքերից ուղարկում է Ղայաբաշի իր զինւորների հսկողութեան տակ: Օֆիցէրը տեղեկացնում է այս բանը պրիստաւին, պրիստաւը 30 նեմեթաբասցի հայեր պահում է մօտը, թէ մնացէք այստեղ և ցոյց տուէք ում մօտ է մնում ձեր ապրանքից, ես բոլորը պիտի առնեմ և ձեզ յանձնեմ, որ տանէք, օֆիցէրին էլ միամտացնում, որ գնայ առանց երկմտելու, ինքը կանէ ինչպէս որ խոստանում է հայերին: Պրիստաւը ասում է օֆիցէրին. ձեր գնալը Ղայաբաշի կարևոր է, որովհետև հաստատ աղբիւրից տեղեկութիւն ունեմ, որ Դալի-Ալին իր հրոսախմբով Կուբից անցել եկել է Նինգիաջէվլուր գիւղը, իր մարդկանց մի մասը թողել այնտեղ, միւս մասով գնացել Հոշում գիւղը, մարդկանց թիւը շատացնելու: Ուրեմն դուք շտապեցէք Ղայարաշի և հայ քաջերի հետ սպանեցէք թշնամուն պատրաստ ոյժերով: Դրանից յետոյ օֆիցէրն եկաւ գիւղ:

Ցաւանք, որ շնորհիւ նոր պրիստաւի, Արէշի հայերը կը ստանում իրանց հարևան թուրքերին յանձնած ապրանքները:

Ցաւալին այն է, որ այսպիսի ծանր օրերին Ղայարաշու հայերը երկու կուսակցութեան բաժանուած՝ իրար միս են ուտում, որպիսի անմիտ արարքը վնասում է ինքնապաշտպանութեան փրկարար գործին: Տեղիս դաշնակցականները մարդ ուղարկեցին Ղայարաշի գիւղացիների մէջ պատահած թիւրիմացութիւնները վերացնելու և գործերը կարգի բերելու:

Գ. Զ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Աստրախան, յունվարի 26-ին

Բաումնեքի չարագործութեան զոհ գնացած յայտնի երգչուհի օր. Պապայեանի ազգականները հանգուցեալի յուղարկութեան առիթով յանձնել են ինձ յիսուն րուբլի՝ յատկացնելու որ և է նպատակի, ըստ իմ որոշման: Յիշեալ գումարից տասն րուբլին յատկացնելով Անիի պեղումների գործին, իսկ քառասուն րուբլին նոյն տեղի Թանկագին յիշատակները նկարող ճարտարապետ պ. Թորամանեանցի գնահատելի գործունէութեանը դիւրութիւն տալու նպատակին՝ ուղարկում եմ յիշեալ գումարը յարգելի խմբագրութեանդ, խնդրելով յանձնել ում որքան յատկացուած է:

Արիստակէս արքեպ.

II

Ղարաքլիսա, փետրվարի 2-ին

Ամէն կողմից լսում ենք, որ թուրքերը կոտորում, թալանում, այրում և քարուքանդ են անում այն ամենը, ինչ որ հային է պատկանում, բացի դրանից և բռնի կերպով հայերին թուրքացնում են: Երևակայում ենք թէ այդ դժբաղդները ինչպիսի տանջանքների պէտք է ենթարկված լինեն այդ արիւնարբու գազանների ճանկերում և ինչպիսի զրկանքների ու բարբարոսութիւնների համբերած: Բազմաձորեցիների և Կրգենցիների կրած տանջանքները լսելով և անտեղ մնալը ի նկատի ունենալով՝ յունվարի 28-ին, մի քանի տիկինների, օրիորդների և երիտասարդների ձեռներէցութեամբ կազմվեց երեկոյթ, որից գոյացաւ զուտ արդիւնք 203 րուբլի 33 կոպէկ:—Մախք եղաւ բուֆետի, իրեղէնների և մրգերի —ընդամէնը 26 ր. 95 կ., տրվեց բաղմաշրջանի Յարութիւն Գաբրիէլեանի վիրաւոր կնոջը, որ գտնվում է այժմ Ղարաքլիսայում, 10 ր. ուրեմն դուրս եկած 203 ր.—33 կոպէկից ծախքը 26 ր. 95 կ. և 10 րուբլին կը մնայ 166 ր. 38 կ., որը փոխադրելով յարգելի խմբագրութեանդ, խոնարհաբար խնդրում եմ յանձնել նորին Վեհափառութեան հովանաւորութեան ներքոյ գործող յանձնաժողովին, վերոյիշեալ բռնի թուրքացած հայերին հասցնելու: Մեծ շնորհակալութիւն տիկիններին, օրիորդներին և երիտասարդներին, որոնք ձեռնարկեցին երեկոյթը, նոյնպէս շնորհակալութիւն հասարակութեան, որ սիրալիր կերպով վերաբերվեց այդ բարի գործին:

Ի դիմաց երեկոյթ կազմողների՝

Գ. Մելիք-Պէգլուզեանց

III

Նոր-Նախիջևան, փետրվարի 3-ին

Խնդրում եմ յանուն արդարութեան և փաստերի ճշտութեան զետեղէք հետևեալ տողերս յարգելի օրաթերթիդ մերձակայ համարներից մէկում:

«Յառաջ»-ի № 12-ում կարդում ենք պ. Դրասյու հետևեալ թղթակցութիւնը Նոր-Նախիջևանից՝ «Նոր-Նախիջևանն էլ, իբրև մի հայաշատ գաղութ... մի բազմամարդ միտինգ կազմեց», «ուր մէկը բացատրեց Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագրից կովկասեան նախագիծը, մի ուրիշը ներկայ դրութիւնը Կովկասում.. և այլն»

Պէտք է ասել, որ քաղաքումս ոչ մի «բազմամարդ միտինգ» չէ եղել: Պ. Թղթակիցը, ըստ երևոյթին, խօսում է այն ժողովի մասին, որ կայացել էր Դաշնակցութեան տեղական մարմնի նախաձեռնութեամբ դեկտեմբերեան օրերին:

Յետոյ թղթակիցը խօսում է ինչ որ «եղբայրակցութեան» (վեց կէտերից բաղկացած) մասին որ և «ընդունեց ժողովը», իբր թէ, «բուռն ծափահարութիւններով» Արդարև, ժողովում շօշափվել են այդ կէտերը: Բայց որովհետև ժողովականների մեծ մասը երկրորդ կէտը չէր ընդունում և այդ մասին առաջ վիճաբանութիւններ տեղի ունեցան, որոնք հազիւ թէ մինչև լուսաբաց վերջանային՝ ժողովի ձեռնարկուներից մէկը առաջարկեց վիճաբանութիւնը ընդհատել և շարունակել մի ուրիշ օր: Այսպ ուրեմն ոչ մի «եղբայրակցութիւն» կարելի չէր անել այդ ժողովում, որովհետև ժողովը չէր վերջացել:

Պ. Դրասեյն շարունակում է և ասում, որ «ժողովը գոհ կերպով ցրվեց դահլիճից»: «Գոհ կերպով» չէր նկատվում, այլ ընդհակառակն, ժողովականների գիտակից մասը, զգալով ժողովի անկարգութիւններից, անբաւական հեռացաւ:

Տիգ. Բերբերեան

IV

Թիֆլիս փետրվարի 5-ին

Մեր հայութիւնը դէպի անդունդն է գլորվում թէ սովով և թէ կրակով: Ինքնապաշտպանութեան զգացմունքը հարկադրում է մեզ բոլորիս ընդհանուր ոյժով ամենակտրուկ միջոցներ գործածել այդ անդունդի զոհերին ազատելու: Մենք շատ անգամ հնում ուրիշ ազգերի օգնել ենք, բայց նրանք մեզ հացի տեղ օձ են տուել. շատ անգամ մեր արիւնն ենք թափել նրանց գոյութիւնը պահպանելու համար, բայց նրանք մեզ սրի են անցկացրել: Այժմ դիմել էլ օտար ազգերին—մեր կողմից կը լինի անմտութիւն. մենք ինքներս պէտք է մեր ձեռքերը մեկնենք մեր արիւնակից թշուառներին, որոնցով լիքն են թէ Բագուն, թէ Շուշին, թէ Ղազախը, թէ Երևանը, և թէ Հին-Նախիջևանն՝ իրանց հայաբնակ գիւղերով: Ո՜ր օրվայ համար ենք պահում մեր կոպէկները. քաղաքացի թշուառները սոված կոտորվում են. գիւղացիք մնացել են առանց լծկանի և սերմի. շատ ընտանիքներ էլ իրանց միակ կերակրողների մահն են ողբում: Եկէք, միահամուռ կերպով վրա թափվենք և այդպիսի թշուառների արտասուքները սրբենք, մխիթարենք և ոյժ տանք, կրկնելով մեր նըպաստը ոչ թէ մի, այլ մի քանի անգամ: Այդ գործը հեռանալի կերպով գլուխ կը գայ, եթէ մենք օգնութիւն ստանանք մեր հարուստներից, որոնց համար մի քանի տասնեակ հազարներ մի քանի գրոշի տեղ կը բռնեն, մեր եկեղեցիներից, վանքերից, վիճակային կոնսիստորիաներից, հոգևոր կառավարութիւններից և ս. Սինոդից: Շատ լաւ կը լինի, եթէ ամեն մի ընտանիք, որ ունի մի փոքրիկ կարողութիւն, լինի նա քաղաքացի, կամ գիւղացի, այդ ազգային նուիրական ընդհանուր օգնութեան համար մի որոշ գումար վճարէ՝ ամսական յիսուն կոպէկ, իսկ աւելի ունևորներն էլ—բարձր գումար,—առաջնորդութեամբ ծխական քահանաների և մասնակցութեամբ երկու—երեք ծխականի: Սրան աւելացնելու եմ և՛ այս, որ այդ նուիրական օգնութիւնը պէտք է ընդհանուր հիմքի վրա դնել և ոչ թէ ջոկել ղարաբաղցիներին, ղազախեցիներին և ուրիշներին, որպիսի միտք վերջին անգամս է յղացել: Կառավարութեան թոյլտուութեամբ հաւաքելով՝ ամբողջ գումարը անհրաժեշտ է դնել Վեհափառ Հօր տրամադրութեան տակ, որը և՛ իր կազմած մասնաժողովների միջոցով կարող է մեր արկածեալներին անհրաժեշտ օգնութեան հասնել:

Այսպիսի ուղղութեամբ հրահանգվելով՝ ես իմ կողմից, կարողութեանս չափ, միանուագ տասը րուբլի եմ ուղարկում մեր հայ թշուառների համար, որը և՛ խնդրում եմ ձեզ, յարգոյ խմբագիր, հասցնել, ում հարկ է:

Գրիգորիս քահ. Երզնկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարդանանց տօնի պատճառով «Մշակի» հետևեալ համարը լոյս կը տեսնի շաբաթ, փետրվարի 11-ին:

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, ի նկատի ունենալով Թուրքական յարձակումներից վնասուած գաւառների հայ ազգաբնակութեան մեծ կարիքը, ի նկատի ունենալով, որ նպաստամատոյց յանձնաժողովը ներկայումս շատ քիչ միջոցներ ունի, կոնդակներ է արձակել բոլոր թեմակալ առաջնորդներին, թէ Ռուսաստանի, թէ արտասահմանի և ազգային բոլոր կարևոր հաստատութիւններին՝ պատուիրելով նպաստներ հաւաքել և որոշ գումարներ յատկացնել իրանց տրամադրութեան տակ գտնված միջոցներից՝ աղէտի ենթարկված հայ ժողովրդին օգնելու համար: Այդպիսի կոնդակ ստացել է և Թիֆլիսի թեմի առաջնորդը՝ հանգանակութիւն սկսելու ոչ միայն թեմի մէջ, այլ և առաջարկելու Ներսիսեան, Յովնանեան և միջոցներ ունեցող եկեղեցիներին իրանց դրամագլուխներից մի որոշ մասն յատկացնելու վերոյիշեալ նպատակով:

Ամսիս 10-ին, ուրբաթ օրը, երաժշտական ընկերութեան շինութեան մէջ համերգ կը կայանայ յօգուտ վնասված շուշեցիների:

Բագուի միջնակարգ դպրոցների սաները, հայ-թուրքական պատահարների տարեդարձի առիթով, վճռեցին ի նշան սուգի ընդհատել պարապմունքները դպրոցներում երեք օրով 8—10-ը: Բացի դրանից, նոյն դպրոցների հայ և թուրք աշակերտները վճռեցին ընտրելով 10 հոգի, իւրաքանչիւր կողմից 5 հոգի, իրանց միջից և ուղարկել Գանձակ քաղաքը պրոպագանդա անելու այնտեղի գիմնազիոնի աշակերտների մէջ, որպէս զի չը կատարեն Գանձակի գիմնազիայի վճիռը բաժանելու երկու մասի. հայկականը՝ հայկական մասում, և թուրքականը՝ թուրքական մասում: Գիմնազիայի այդ տեսակ բաժանումը, աշակերտների կարծիքով, միայն արգելք կը հանդիսանայ հայերի ու թուրքերի համերաշխութեանը, որը անհրաժեշտ է ներկայ պատմական վայրկեանում: («Баку»)

Թիֆլիսի քաղաքային ուպրավան, փետրվարի 6-ին լսելով խաղաղարար յանձնաժողովի առաջարկութիւնը, ուղարկելու դումայի վճռած 5000 րուբլուց Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումի վնասվածներին օգնութիւն հասնելու համար 3000 ր. Շէյխ-ուլ-իսլամին և 2000 ր. հայոց բարեգործական ընկերութեանը,—որոշեց յանձնաժողովի առաջարկութիւնը ընդունել, միաժամանակ ուղարկվելիք փողից պահել 10%-ը, այսինքն 500 ր. ուպրավայում, բաժանելու օտար վնասվածներին, որոնք չեն պատկանում հայ կամ թուրք ազգութիւններին:

Քաղաքում լուր է պտտում, որ շուտով Բորչալուի գաւառում ևս զինւորական դրութիւն կը յայտարարվի: («Ցնոր. Փուր.»)

Փետրվարի 7-ին, առաւօտեան 7 ժամին, Թիֆլիսի պոստ-հեռագրատան դահլիճներից մէկում հաւաքեցին պաշտօնեաներին և երդմնեցրին: Նախ երդմնեցրին պրավօսլավնի և ապա հայ-լուսաւորչական պաշտօնեաներին:

Թիֆլիս եկաւ տեղական գարնիզոնն ուժեղացնելու համար Նիսսաւետոլեան գնդի մի բատալիօն:

Մտադրութիւն կայ Թիֆլիսում բոլոր կալանաւորվածներին զինւորական դատի ենթարկել: («Вѣкъ»)

Ինչպէս մենք մի քանի անգամ «Մշակ»-ի մէջ մատնանիշ ենք արել, մեր հացթուխները և այլ մթերքներ վաճառողները, որոնք ամեն օր անհագին քանակութեամբ ապրանք են ստանում երկաթուղով անարգել՝ մի անգամ սովորելով բարձր գներով ծախել մթերքը ժողովրդի վրա, դժուարանում են մի անգամից ցածրացնել գները և վաճառել ապրանքը նորմալ և բարեխիղճ գներով: Անկասկած նրանք մտածում են՝ ինչու պակասցնել, քանի որ ուզած գներով էլ կամայ ակամայ սպառողները առնում են: Որպէս ողորմութիւն այս օրերս հացթուխները հացի գինը 1/2 կ. պակասեցրին. դրանց հետևեցին Թոնրի հայ թխողները, մինչդեռ գործին տեղեակ ամեն մի մարդ գիտէ, որ նրանք եթէ 1 1/2 կ. պակասեցնէին—ոչինչ չէին կորցնի: Նոյն փարիսեցութիւնը բանեցնում են շաքարավաճառները, որոնք ամեն մի հինգ օրից յետոյ 10 և 20 կ. են պակասեցնում պուդումը և ներկայումս հասցրել են շաքարի պուդը 7 ր. 20 կ. և սպառողներին ևս մխիթարում են այն յոյսով որ էլի շուտով կը պակասցնեն գները, այն ինչ ներկայումս համարձակ նրանք կարող են վաճառել պուդը 6 ր. 40 կ.: Բայց ինչու վաճառեն այդ գնով, քանի որ ուզած գներն էլ անտրտունջ և ակամայ տալիս է ժողովուրդը, չէ՞ որ նոյն ժողովուրդը մի ամիս առաջ շաքարի պուդն 12 ր. էր վճարում, ինչու հիմա 7 ր. 20 կ. չէ կարող վճարել. առանց շաքարի, հացի և նման անհրաժեշտ մթերքների հօ մնալու չէ: Կոնտրօլ էլ ոչ մի կողմից չը կայ, ջանի թող դուրս գայ սպառողների՝ ունեն թէ չունեն վճարի ուզած գինս... Ահա մեր առօրեայ կեանքի տխուր իրականութիւնը:

Ինչպէս լսում ենք տիկ. Հ. Մարտիրոսեան մտադիր է մօտ ապագայում Արզրունեան թատրոնում տալ հանգուցեալ Մ. Եկմալեանի պատարագից հոգևոր մեծ կոնցերտ. խումբը բաղկացած կը լինի ոչ պակաս 150 հոգուց: Օրկեստրի մասը տիկինը մտադիր է յանձնել մեզ յայտնի պ. Լ. Պ. Շտեմբերգին, իսկ խմբական մասը Պետերբուրգից եկած Գ. Միրզոյեանցին:

Փետրվարի 16-ին արտիստիքական թատրոնում, բարոնէսսա Բաուշ-ֆոն-Տրաուբենբերգի ղեկավարութեամբ կայանալու է բարեգործական նպատակով ներկայացում: Մուտքը յատկացվում է մանկաբարձուհիների նպաստամատոյց ընկերութեանը:

Քաղաքական գործերի համար Պետերբուրգի աքսորական բանտում բանտարկված կանայք, լսելով, սկսեցին իրանց սովի ենթարկել շնորհիւ բանտային վերակացուներից մէկի անպարկեշտ վերաբերմունքի:

Մոսկվայի երկաթուղու ծառայութիւնից արտաքսել են հոկտեմբերի գործադուլի պատճառով 1200-ից աւելի ինժեներներ:

Վլադիկավկազի երկաթուղու ծառայութիւնից արտաքսված են 500-ից աւելի ծառայողներ:

Թիֆլիսի գարնիզոնի հրամանատարը երկու հրաման է արձակել. 1) Հետևակ զօրքի զինուորները իրաւունք չունեն առանց օֆիցէրի խուզարկութիւն կատարել և եթէ մի այդպիսի բան պատահի, պատասխանատու է այս կամ այն պատրուլի կամ վաշտի օֆիցէրը. 2) Հետևակ զօրքի զինուորները իրաւունք չունեն ձրի երթևեկել տրամվայով:

Մի նոր շրջաբերականով պաշտօնից արձակվեցին Անդրկովկասեան երկաթուղու էլի 268 պաշտօնեաներ և բանուորներ: Արձակվածների մեծամասնութիւնը վրացիք են կազմում:

Փետրվարի 6-ին յանկարծամահ եղաւ Փոխարքայի խորհրդի անդամ Ուսպրուգով:

Պետերբուրգից «Ցնորփ-Փուրցէլ» լրագրին հեռագրում են, որ Կովկասում Պետական Դումայի համար անդամների ընտրութեան օրը պէտք է Փոխարքան նշանակէ:

Ներքին գործերի մինիստրութիւնը իր կողմից հաւանութիւն տուեց, որ քահանաները ընտրվեն Պետական Դումայի անդամ:

Քութայիսի կալուածական բանկը գանձարանից փոխառութիւն խնդրեց: Բանկի վնասները գրաւ դրված տների այրվելուց և ֆինանսական ճգնաժամի պատճառով այնքան մեծ են, որ բանկը ստիպված է դադարեցնել փողերի բաց թողնելը տների գրաւականով, եթէ, ի հարկէ, ֆինանսների մինիստրութիւնը այդ միջնորդութիւնը չը յարգէ:

Պրիբալթեան երկրից շարունակվում են տեղեկութիւններ գալ, որ այնտեղ տեղի ունեն կոտորածներ և հրդեհարկութիւններ առանց քննութեան և դատաստանի: Գիւղական դպրոցների մեծ մասը փակված են, որովհետև ուսուցիչները կամ կալանաւորված են կամ փախած: («Вѣкъ»)

Անդրկասպեան երկրից հաղորդում են, որ այնտեղ ագիտացիա են վարում բացառապէս յեղափոխական կուսակցութիւնները: Ծառայութիւնից արձակվում են անբարեյոյս համարվածները: Ժանտախտի վտանգն աճում է:

Բեռլինի «Neue Teie Presse» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ Բեռլինից ռուսներին խումբ խումբ դուրս են քշում՝ գլխաւորապէս արհեստաւոր և բանւոր դասակարգի մարդիկ և միայն փոքր քանակութեամբ ուսանողներին: Բեռլինի ոստիկանութիւնը հետապնդում է դրանց, իբր, գլխաւորապէս այն պատճառով, որ դրանք ապրուստի միջոցներ չունեն: Շատերին դրանցից հրամայված է ոչ միայն թողնել Բեռլինը, այլ և որոշ ժամանակում հեռանալ իսպառ Պրուսիայի սահմաններից, չը նայելով որ նրանցից ոմանք, արդէն գործ են գտել գործարաններում: Աքսորվածներից շատերը երկար ժամանակ բնակութիւն են ունեցել հաստատած Բեռլինում: Թղթակիցը ընդամին հաղորդում է, որ աքսորվածների մէջ կան և շատ ռուս կանայք:

Պետերբուրգի դատաստանական պալատի շրջանի երդուեալ հաւատարմատարները իրանց ընդհանուր ժողովում, յունվարի 29-ին, հետևեալ վճիռն են կայացրել 1) զինւորական դատարանների և այսպէս անուանված պատժողական էքսպեդիցիաների ձեռքով կատարած կենսազուրկ անելը մարդկանց գնդակահարութեամբ և այլ միջոցներով՝ ոչ թէ յանցաւորներին պատժել է նշանակում, այլ դա միայն պետութեան օրգանների կողմից յանցանք է: 2) Երդուեալ հաւատարմատարների ժողովը պարտք է դնում իր միջից ընտրած յանձնաժողովի վրա՝ հաւաքել պետութեան օրգանների ձեռքով ներկայումս գործ դնվող պատժական ձևերի և եղանակների վերաբերմամբ նիւթեր ներկայացնելու ապագայում ժողովրդի ազատ ընտրած ներկայացուցիչների դատաստանին:

Քաղաքիս պետական բանկի բաժանմունքում ներկայումս գրաւ դրած արժէքական թղթերի համար տոկոսը բարձրացրել են 9% և այս հիման վրա միւս բանկերը ևս 9—9 1/2 են դարձրել կամ, ուրիշ խօսքով, սովորականից 2 1/2—3% աւելի է վերցվում: Կարելի է երևակայել թէ տոկոսի այդ մեծացումը ընդհանուր առմամբ որքան ծանրացնում է վաճառական և միւս դասակարգերի դրութիւնը, որոնք շարունակ դրամական պէտքեր ունեն և մուրհակներով և գրաւականներով փողեր են դուրս բերում բանկերից: Վերջի վերջոյ ամեն բան ծանրանում է բնակիչների վրա և այս բոլորը հանդիսանում է՝ որպէս հետևանք Ռուսաստանում տիրող խառնակ վիճակի, որի վերջը դեռ չէ երևում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒԶՎԷԼՏԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ ԿԱՐԾԻՔԻ ԱՌԱՋ

Նախագահ Ռուզվէլտի միջամտութեան հարցը մեծ յուզում է առաջ բերել ոչ միայն հայ, այլ և թուրք ժողովրդի մէջ: Խօսում են այդ խնդրի մասին հայ լրագիրները. խօսում են և՛ թուրք լրագիրներն ու գործիչները, սկսած պ. Ադայեվից, Բաքուում, Ահմէդ Ռիզա բէյից, Պարիզում, մինչև սուլթանի քրոջ որդին, իշխան Սաբահէդդինը, որ քեռու, Կարմիր Գազանի ռէժիմից հալածական, ապաստանել էր իր եղբօր հետ Պարիզ:

Իշխան Սաբահէդդինը պ. Բերթլօյին, ֆրանսիական նախկին արտաքին գործերի մինիստրին ուղղել է մի նամակ, նրա յայտնի խնդրագրի առիթով՝ Նախագահ Ռուզվէլտին:

Ո՛չ միայն կարևոր, այլ և անհրաժեշտ է, որ մենք ծանօթանանք, թէ ինչ են մտածում, ինչպէս են տրամադրված դէպի այդ հարցը, Թուրք ժողովրդի հասարակական կարծիքի արտայայտիչները:

Ահա այդ պատճառով մենք էլ տանք այսօր իշխան Սաբահէդդինի նամակը, որ հրատարակված է «Matin»-ում «Թիւրքիայի վերակենդանացումը» տիտղոսի տակ: «Եթէ Աբդուլ-Համիդը մեռնի, ասում է «Matin»-ը նամակի առիթով տպած նկատողութեան մէջ, իշխան Սաբահէդդինը կոչված է պետական խորհրդում գերակշիռ դեր գրաւելու»:

Պարոն Բերթլօյին, Պարիզում

1906 թ. յունվար

Երախտագիտութեան խորին զգացմունքով կարդացի այն մարդասիրական նամակը, որ ուղղեցիք Նախագահ Ռուզվէլտին ի նըպաստ հայերի:

«Ամօթ է Եւրոպայի, և թոյլ տուէք աւելացնելու նոյնպէս Ամերիկայի համար, ասում էք ձեր նամակում, թողնել, որ յաւերժանայ ոճրի և անիշխանութեան մի այնպիսի դրութիւն, որի յարատև սպառնալիքները, չը մոռանանք, տարածվում են մինչև անգամ մեր սեփական հայրենակիցների վրա»:

Թոյլ տուէք ինձ աւելացնել իմ կողմից, որ կայ մի աւելի վճռական պատճառ ևս, որ ոյժ է տալիս ձեր խօսքերին. Եւրոպան, կամ աւելի ճիշտն ասած, Եւրոպայի մի մասը, ոչ միայն չէ բաւականացել ոճրի և անիշխանութեան մի այդպիսի դրութեան յաւերժացումը թոյլ տալով, այլ և նա ուղղակի մասնակից է հանդիսացել: Միայն ժողովրդական դժգոհութիւնը և տեղական վարչութեան բացակայութիւնը չեն, որ ծնել են այդ անիշխանական դրութիւնը երկար տարիներից ի վեր եւրոպական Թիւրքիայի մի մասը արիւնոտող յեղափոխութիւնները, այլ մի քանի պետութիւնների պաշտօնական գործակալները աշխատել են նոյնպէս վարպետ ձեռքով կազմակերպելու դրանց:

Պէտք է մատնացոյց անել և մի ցաւալի ճշմարտութիւն—այն՝ որ Կ. Պօլսի կառավարութիւնը՝ (եթէ միայն կարելի է այդ անունը տալ) հայկական ջարդերի ժամանակ, յաճախ է գտել իր անմիջական հարևան պետութիւնից համակրանք և քաջալերութիւն:

Հայերի մասին են խօսում, թուրքերի մասին չեն խօսում:

Բայց եթէ դիւանագիտութիւնը դըրժել է իր պարտքին, կան նշանաւոր մարդիկ, որ մեծ կորովով պաշտպան են հանդիսանում քաղաքակրթութեան պարտաւորութիւններին և իրաւունքներին... այն դէպքում սակայն, երբ հարցը թուրքերի մասին չէ, որոնք ոչ նուազ հարստահարվում են, քան իրանց քրիստոնեայ հայրենակիցներից ամենադժբախտները. երբ ջարդեցին քրիստոնեաներին, ջարդեցին միայն նրա մասսան. բայց երբ ջարդում են թուրքերին, յարձակվում են միայն նրանց ընտրեալ մասի վրա, որովհետև երկրագործ դասակարգը, որ Թուրք ժողովրդի ստուար մեծամասնութիւնն է կազմում, ներկայ ռէժիմի համար անհանգստութիւն չէ ներշնչում բնաւ: Բացառապէս իրանց վրա ծանրացող զինւորական պարտաւորութեան շնորհիւ թուրք երկրագործները անտանելի կերպով աղքատացել են: Գիւղացու օջախը անհուն տխրութեան բոյն է: Հողը մշակվում է միայն կնոջ ձեռքով, որը ոչ հայր, ոչ եղբայր, ոչ ամուսին ունի, որոնք կամ մեռած են կամ մահամերձ, Մակեդոնիայի, Արաբիայի, կամ այլ նախճիրների դաշտերում: Եւ երբ հարկահաւաքը, կամ աւելի ճիշտ ոստիկանը, ներկայանում է նրա դուռը, հաւատացէք որ շատ լաւ է իմանում հաւաքել իր հարկը. նա գործ է դնում ամեն միջոց, խլում է դժբաղդի ձեռքից նրա մի հատիկ եզը. խոհանոցի մի քանի իրեղէնները և մինչև անգամ նրա թշուառ անկողնի ներքնակը:

Թիւրքիայում գիւղացին կործանված է ինտելիգենտը աքսորված:

Այլ տեսարան: Կան գիշերներ, երբ Կ. Պօլիսը զօրաշարժի մէջ է կարծես: Ելդըզի բարձունքներից մինչև Բէշիկտաշի ծովափունքը լցվում է տարօրինակ երթևեկութիւնների և զինւորական քայլերի ժխորը: Հեռուից հեռու աղաղակներ պատառում են խաւարը. «Գետինը մանէ բանւորը, գետինը մանէ մարդասպանը»: Թիւրք ազատամիտներ և ուսանողներ են, որոնք ձերբ են առնում աքսորի ճանապարհը, մի անկանոն, գերագանցօրէն քմահաճ դատարանի տանջանքներն ու դատապարտութիւնները կրելուց յետոյ: Նրանք չը գիտեն դեռ ևս գնում են դէպի աքսոր, թէ դէպի մահ: Շղթայակապ ձեռներով, քսան, քառասուն, վաթսունական խմբերով, զօրքի հսկողութեան տակ, գնում են, զօրքի, որոնց սրտերի յետևից չեն մոռացած սակայն գթել, կոսմոպոլիտ լրտեսների լեգէոններ: Դատապարտվածների բողոքներին և գայրոյթի ճիչերին յաջորդում են, մերթ ընդ մերթ, սուլիչի սուր շւոցներ: Պահակավայրերն են, որ միմեանց ձայն են տալիս, թէ ընդունել են զոհերին: Արշալոյսից առաջ նրանց տեղաւորած կը լինեն զինագործարանի ածխատար նաւերի փորում, երբեմն, կրկնակի գոց ունեցող նաւերի յատակում. էլ նրանց մասին ոչ ոք ոչինչ չի լսի այնուհետև:

Մի քառորդ դար է, որ այս գիշերային քստմնելի էքսպեդիցիաները կատարվում են արդէն անընդհատ, և որովհետև իւրաքանչիւր օր աճում է լիբերալների թիւը, հէնց իրանց կրած հալածանքների շնորհիւ նոյն իսկ, աքսորվածների յուղարկները նոյն համեմատութեամբ բազմապատկվում են:

Մեր ծովային մեծ քաղաքների ծոցումն է, որ Թիւրք երիտասարդութիւնը հնարաւորութիւն է գտնում շփվել արևմտեան մտքի հետ, ուսումնասիրել, իւրացնել և այնուհետև փոխանցել այն՝ յիշեալ աքսորականների միջոցով՝ օսմանեան կայսրութեան ուրիշ քաղաքների և հեռաւոր գիւղերի երիտասարդութեան: Այսօր ամբողջ երկրում կատարվում է իմացական մի բուռն պրոպականդ ի նպաստ բացարձակ ռէժիմի, աբսօլիւտիզմի տապալման:

Անհրաժեշտ պահանջ է կայսրութեան ընդհանուր բարենորոգումը:

Այն բարենորոգումները, որ Եւրոպան ժամանակ առ ժամանակ հարկադրում է Թիւրքիային, նպաստել են, փոխանակ դադարեցնելու, խզումը սոցիալական հաւասարակշռութեան՝ փոխադարձաբար միմեանց պատառոտող բոլոր դաւանական տարրերի միջև: Օսմանեան կայսրութեան հաստատումը՝ անցեալում, ինչպէս ներկայումս համապատասխանել է սոցիալական և պատմական մի անհրաժեշտութեան, որից պէտք է ներշնչվել, եթէ կամենում ենք յանգել հարցի լուծման: Այդ անհրաժեշտութիւնը անմիջական պահանջ է դնում կայսրութեան ընդհանուր և ոչ մասնակի ռէֆորմների: Որովհետև, օրինակ, բոլոր հայաբնակ գաւառներում, առանց բացառութեան հայերը փոքրամասնութիւն են կազմում: Ուրեմն, ինչպէս կարելի է լրջօրէն խորհել նրանց դրութեան բարւոքման, եթէ չը մտածենք նոյն իսկ մեծամասնութեան վիճակի մասին:

Հայ և թուրք նոյն ցաւերն ունեն:

Բացի սրա, ինչ էլ որ ասեն հայերը, գոյութիւն ունի հայերի և թուրքերի շահերի միջև մի կատարեալ համերաշխութիւն: Այդ երկու տարրերը կազմում են խաղաղ աշխատաւորների մի ընկերութիւն, մի հասարակութիւն, որ երազում է կարգի և խաղաղութեան մասին և որոնք ենթարկված են նոյն վտանգին. քիւրդ թափառիկ ցեղերի պարբերական յարձակումներին: Առանց խօսք անգամ անելու Համիդիէ հեծելազօրքի մասին, որը բացառապէս կազմված է քիւրդերից, երկրի նոյն մասում բանակած 4-րդ զօրաբաժնում տիրապետում է նոյնպէս, թէպէտև մահմեդական, բայց ոչ-թուրք տարրը:

Արևմուտքում շփոթում են առ հասարակ մահմեդական և թուրք խօսքերը. դա շատ ցաւալի է: Բոլորովին մոռանում են, որ մահմեդական քիւրդերը ամենևին չեն խնայում որքան հայ, նոյնքան թուրք գիւղերին և երբ որսը պակասում է, այն ժամանակ սկսում են միմեանց թալանել: Ես մտադրութիւն չունեմ սակայն յարձակվել քիւրդ ցեղի վրա: Իբրև արիական ծագումն ունեցող՝ ցեղագրական տեսակէտից աւելի մօտ ազգակիցներ հայերին, քան թուրքերին, քիւրդերը օժտված են հիանալի իմացականութեամբ և կորովով: Նրանց վայրագութիւնը արդիւնք է հէնց իրանց սոցիալական դրութեան: Եթէ նրանց ստիպէին մեթօդիկ կերպով հաստատվել հողի վրա և կազմել մի նստակեաց հասարակութիւն, կը ջնջէին անհամաձայնութեան և անիշխանութեան այդ գլխաւոր տարրը և կը սիրաշահէին դէպի քաղաքակրթութեան դատը Փոքր-Ասիայի այդ այնքան արգասաւոր, այնքան հարուստ մասը:

Բայց դա կը լինէր մասնակի դարման, որը պէտք է ասել, ստորադրված է աւելի ընդարձակ, աւելի ընդհանուր դարմանին, ամբողջ կայսրութեան ապակենդրոնացումը, որը դիւրութիւն պիտի ընծայէր երկրի նըստակեաց բնակիչներին գործադրելու մի իսկական կոնտրոլ տեղական գործերի վրա և ձեռք առնելու բոլոր անհրաժեշտ միջոցները կարգի և խաղաղութեան հաստատման համար:

Ուրեմն, եթէ Եւրոպան և Ամերիկան վճռել են յանուն մարդկութեան միջամտել Թիւրքիայում, պէտք է,—եթէ չեն ուզում անարդար լինել—որ միջամտէին ներկայ ռէժիմի բոլոր զոհերի ի նպաստ և մանաւանդ պէտք է որ նրանք նկատի առնեն այն առաջադիմութիւնները, որ կատարվել է Թիւրք ազատամիտների մտքում, որոնք ընդունակ են երկրին տալու վերջնական խաղաղութիւն: Այդ իրականութիւնից ներշնչվելով, նրանք պէտք է, փոխանակ Սուլթանին՝ օտար, ազգային գերիշխանութեան գաղափարի հետ անհաշտ կոնտրոլ հարկադրելու, քաջալերեն ներքին կոնտրոլի մի սիստեմի հաստատութիւնը, որը միայն կարող է ազդեցիկ և տևական լինել:

Կ. Պօլսում է որ Եւրոպան և Ասիան պէտք է հաշտվեն:

Ասենք Եւրոպայի ամբողջ շահերն են պահանջում, որ օսմանեան կայսրութիւնը վերակենդանանայ: Մեր ժամանակի քաղաքական մեծ համախմբումների, և փոքրիկ երկրների դէպի մեծերը ձգվելու երևոյթի հանդէպ մահմեդական աշխարհը չէր կարող առանձնանալ: Կ. Պօլիսը, բարոյական կենտրոն, ազդում է 300 միլիոն մարդկային էակի վրա, որ կազմում են այդ մահմեդական աշխարհը—մի հրաշալի ձգողութիւն և հետզհետէ յաճախակի ձեռնարկութիւնները արևմուտքից դէպի Արևելք, նպաստում են, միւս կողմից, սերմելու համերաշխութեան կապերը բոլոր մահմեդականների միջև:

Ժամանակ չէ՞ր արդեօք ջնջելու այդ երկու աշխարհների հակամարտութեան, անտագոնիզմի զարգացումները, հակամարտութիւն, որ կարող էր մի օր վտանգի ենթարկել տիեզերական խաղաղութիւնն ու ապահովութիւնը: Կ. Պօլիսը՝ Արևելքի և Արևմտքի աշխարհագրական և իմացական միացման կէտը, այսօր պատրաստված է հրապարակ հանելու Իսլամի վրա ունեցած իր անհուն ազդեցութիւնը, ցրվելու համար վաղեմի թշնամութիւնը, որ պառակտում է երկու քաղաքակրթութիւնները և նրանց մէջ կայացնելու մի վերջնական համաձայնութիւն:

Արդէն, շնորհիւ Ասիայի և նոյն իսկ Աֆրիկայի մեծ մասում թափանցած թիւրք գրականութեան, որ ներշնչված է «ժամանակակից մտածումի» ամենաթանկագին նուաճումներից, ստեղծել է իրան համար մերձաւոր Արևելքում, Եւրոպային հետզհետէ համակիր սոցիալական մի միջավայր:

Դիւանագէտների յայտարարութիւններն ու ճառերը ինձ այնքան էլ մտատանջութիւն չեն պատճառում: Ես աննմանապէս աւելի նշանակութիւն եմ տալիս խորհողների և գիտութեան խաղաղական ներկայացուցիչների անշահախնդիր և աւելի լուրջ կարծիքին, որոնց լուռ աշխատութիւնը պատրաստում է մարդկութեան ապագան:

Ես շատ բաղդաւոր կը լինէի, եթէ այս նամակս կարող լինէր հաստատելու ձեր աչքերի—եւրոպական մի հռչակաւոր անձի աչքերի—և այն անձանց հայեցակէտի առաջ, որ մասնակցում են ձեր մարդասիրական ցոյցին—օրինաւոր իրաւունքները այն ազգութեան, որին պատիւ ունեմ պատկանելու:

Հաճեցէք ընդունել, պարոն, իմ շատ բարձր համարման արտայայտութիւնը:

Սաբահէդդին

Կարելի է վիճել իշխան Սաբահէդդինի հետաքրքիր նամակի մի քանի կէտերի մասին: Մասնաւորապէս այն կէտի մասին, օրինակ, երբ նա Սուլթան Համիդի և նրա նըման ուրիշ շատ շատերի պէս յայտարարում է, որ հայերը ոչ մի գաւառում մեծամասնութիւն չեն կազմում: Դա մի անարժան խաղ և խախուտ փաստ է, որ առաջ են նետում ամեն անգամ, երբ հարց է ծագում հայկական գաւառների բարենորոգումների մասին: Ի հարկէ վարչական այն դիտաւորեալ և խորամանկ բաժանումներով, որոնք գոյութիւն ունեն ներկայումս, հայերը ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում: Բայց եթէ այդ քմահաճ բաժանումները ջնջենք և ընդունենք յիշեալ Թեզիսի նպատակաւոր հայեցակէտ, մենք կարող ենք հաստատապէս պնդել, որ հայերը կազմում են մեծամասնութիւն որոշ գաւառներում: Բայց, ինչպէս ես ասացի, չեմ ուզում վիճել իշխանի հետ, այն գլխաւոր պատճառով, որ մենք հայերս միանգամայն համաձայն ենք երկրի ոչ մասնակի, այլ ընդհանուր բարենորոգութեան: Սակայն էականը այն է, թէ Եւրոպան կարող է այդ հարցը բարձրացնել, նա կարող է ստիպել Սուլթանին որ, օրինակ, գործադրութեան մէջ դնէ Թիւրք Սահմանադրութիւնը: Եւրոպան կանգնած միջազգային հարց չէ, դրա համար չը կան միջազգային յանձնառութիւններ: Ինչպէս որ Թիւրքիայի վերածնութիւնը պէտք է սպասել, հէնց իր բնիկ ժողովրդից: Ժողովուրդը՝ նա միայն պէտք է վանէ բռնաւորին և հաստատէ այնպիսի կարգեր, որոնք հող չտան մասնակի բարենորոգումների պահանջին: Մենք հայերս, դարձեալ կրկնում ենք, կը ցանկայինք միևնոյն բաղդաւորութեան մէջ եղբայրացած տեսնել Թուրք բազմաչարչար ժողովրդին, ինչպէս եղբայրացած ենք մի նոյն դժբաղդութեան մէջ:

Բայց այս բոլորը խօսքով չի լինի: Իսկ, մինչև այժմ, Թիւրք լիբերալները բաւականացել են, գեղեցիկ, բայց, աւաղ, ապարդիւն փաստերով:

Տ. Զաւէն

ԿՈՉ

«Հին-Հնչակեան» կուսակցութեան մէջ գտնուող մեր տաճկահայ եղբայրներին

Կովկասում գտնվող «Հնչակեան» Թիւրքահայերը հետևեալ կոչն են հրատարակել:

«Բոսֆորի ափերից կը լսուին լէշակեր սուլթանին ցնծութեան աղաղակները. նա այժմ ազատ է իւր բոլոր գործերին մէջ, նրան խանգարող չկայ, ոչ ոք նրանից հաշիւ չի պահանջեր:

Մեր Տաճկահայ եղբայրները կը հեծեն արիւնարբու Սուլթանի ռէժիմին տակ. նրանք կը տանջւին բանտի խորքերում, կաքսորուին հեռաւոր վայրեր. կ'անպատուեն մեր մայրերին, կը բռնաբարեն մեր քոյրերին, սրի ծայր կը բարձրացնեն: Իսկ կարմիր սուլթանը նորանոր դաւեր կը լարէ հայերիս դէմ. եւ ո՜վ գիտէ, ալ ինչ նոր աղէտների պիտի ենթարկուին մեր թշուառ եղբայրները:

Մեր երկրից օգնութիւն կաղերսեն մեզնից մեր հայրենակից եղբայրներ ու քոյրեր: Սակայն ինչ ըրած ենք մենք, տաճկահայ եղբայրներս, անոնց օգնելու համար, կամ ինչ պիտի կրնանք ընել տագնապալից րոպէներին. միթէ մենք պիտի միայն սառնասիրտ դիտող ըլլանք, երբ մեր կովկասցի եղբայրներն անգամ այս դժբախտ պարագային դեռ կըննեն և կ' աշխատին ազատել տաճկահայ եղբայրներին գազան սուլթանի ճիրաններից:

Մենք կը պատկանինք մի այնպիսի կուսակցութեան, որը իր ծրագրին մէջ գրեր է խոշոր տառերով—«Պատմական առաջնակարգ անհրաժեշտութիւն է, որ հայ յեղափոխական գործունէութիւնն այսօր բացառապէս Նուիրէ Թիւրքիոյ ժողովուրդային դատի պաշտպանութեան ու լուծման, որ, ուրեմն, յեղափոխական գործունէութեան ասպարէզն է Թիւրքահայաստան». այս ուղղութեամբ էլ կը խօսենք մենք, հնչակեաններս, գիւղերում և կը կրցնենք գիւղացիներին արիւն քրտինքով վաստակած վերջին կոպէկները. սակայն ինչ արել է «Հնչակեան» կուսակցութիւնը տաճկահայերի համար 1896 թուականներից յետոյ.—ոչինչ:

1896 թուականից սկսած հնչակեան կուսակցութիւնն իր գործունէութիւնը տեղափոխեր է ի Կովկաս և պաշտօնական «Հնչակ» օրգանի 1904 թւի նոյ. 12 ում պաշտօնապէս յայտարարված է, որ մենք, հնչակեաններս կը միանանք ռուսաց սոցիալ-դէմօկրատների կուսակցութեան հետ և պիտի գործենք անոնց շարքերում. (թէև սոցիալ-ռամկավարականների մայիսի 1-ի համագումարը որոշեր և յայտարարեր է թռուցիկով ի գիտութիւն հասարակութեան, որ սոցիալ-ռամկավարականները չեն ընդունիր մեզ, հնչակեաններիս, իրենց շարքերի մէջ, մինչև որ մենք չփոխենք մեր երկդիմի դերը:)

Անցեալ տարի ժողովուրդի պահանջի ճնշման տակ միայն անցաւ սահմանը դէպի Մուշի տաճկահայերին օգնութեան հնչակեան մի խումբ 14 հոգուց բաղկացած, (որի մասին հնչակեան արտասահման մասնաճիւղի հրատարակած թռուցիկում ասված էր, որ «90 հոգի հնչակեան քաջեր» (.°) անցան սահմանը, զարմանալի քաջութիւն արեցին, «խոտի պէս հնձում էին» թիւրքերին, վերջապէս «7 թընդանօթ խլեցին ու խորտակեցին ժայռերի վրա» (.°! . . .) : Եւ այդ չնչին խումբն ուղարկելու համար, ինչպէս կ'ասեն տեղիս մասնաճիւղի անդամները, խումբն ուղարկող հնչակեան մասնաճիւղը նկատողութիւն ստացեր է հարևան մասնաճիւղերից և կենտրոնից, որովհետև հնչակեան կուսակցութիւնը սկզբունքով դէմ է պարտիզանական կռիւներին:

Արդ, ինչ կարող է տարօրինակ ըլլալ քան մեր տաճկահայերիս, հնչակեան կուսակցութեան պատկանելը: Տաճկահայ եղբայրներ բաւական է որչափ խաբուած մնացինք. մեր աչքերը բացուեցին վերջապէս, մենք կը պատկանինք մի կուսակցութեան, որ մեր մասին բնաւ հոգ չի տանիր. մենք նրան հարազատ մայր անուանեցինք, իսկ նա մեզ ընդունեց իբրև խորթ զաւակներ:

Տաճկահայ եղբայրնե՛ր, մեր շապիկը աւելի մօտ է մարմնին, ուստի մենք կը պահանջենք, որ հնչակեան կուսակցութիւնը անպատճառ հաւատարիմ մնայ հիմնական ծրագրին մէջ դրած յօդուածին Թիւրքիոյ ժողովրդային դատի պաշտպանութեան անհրաժեշտութեան մասին և գործել այդ ուղղութեամբ, կամ հակառակ դէպքում մենք պիտի մեր գլխի ճարը տեսնենք և յարենք այն յեղափոխական կուսակցութեան, որ իսկապէս կը զբաղի տաճկահայերիս դատով: Այն ատեն միայն մենք հնարաւորութիւն կունենանք, մեր ուժերի ներածին չափ, օգնութեան ձեռք մեկնել մեր տառապեալ հայրենակիցներին:

Խումբ մը Տաճկահայ Հնչակեաններ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

7 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի: Պաշտօնական: Երկաթուղային վարչութիւնից: Սիբիրի գըլխաւոր գծի տեղափոխութեան միջոցների ուժեղացումը պահանջեց վերցնել 1904 և 1905 թ. եւրոպական Ռուսաստանի երկաթուղագծերից աւելի քան 2000 շոգեկառքեր, 28,000 վագոններ ու պլատֆորմներ: Բացի դրանից, գործարաններից դուրս եկած բոլոր նոր շոգեկառքերը ուղարկված են կրկին հեռաւոր Արևելք, որի շնորհիւ եւրոպական Ռուսսաստանի երկաթուղային գծերը շոգեքարշի մեծ պակասութիւն էին զգում։ Այս քանի հետեանքն այն եղաւ, որ շատ կայարաններում կուտակվեցին չը տարված ապրանքների մնացորդներ, որոնց չափը անցաւ 170,000 վագոնից։ Պատերազմական գործողութիւնների վերջանալուց յետոյ, հնարաւոր եղաւ մի որոշ չափով ուժեղացնել եւրոպական գծի երկաթուղային գնացքները, բայց շնորհիւ 1905 թուի վերջին երեք ամիսների դէպքերի—երկաթուղիների երթեւեկութիւնը այնպիսի դըրութեան մատնվեց, որպիսին երբեք չէ եղել։ Տեղափոխութեան պահանջին բաւարարութիւն տալ—գործադրելով միայն երկաթուղագծերի շահագործութեան սովորական և բնական միջոցները,—հնարաւոր չեղաւ։ Որի համար ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը հարկադրված էր դիմելու ծայրահեղ միջոցների, բարձրացնելու համար աշխատանքի կարողութիւնը և ուժեղացնելու ապրանքների տեղափոխութիւնը։ Այդպիսի միջոցներով աջողվեց հասնել որոշ բարելաւման՝ ապրանքների տեղափոխութեան վերաբերմամբ և դրութեան սրութիւնը բաւականաչափ հարթվեց։ Բոլոր գծերի վերոյիշեալ բեռնաւորումը հասաւ 28000 վագոնների։ Յունվարի սկզբում այս թիւը ընկաւ մինչև 12,000-ի, այժմ կըրկին բարձրացաւ մինչև 22,000-ի։ Թէև հիմք կայ ենթադրելու, որ տեղափոխութեան գործը ընկել աստիճանաբար լաւանալու վրա է, սակայն ի նկատի ունենալով փոխադրելի ապրանքների կուտակումը, չի կարելի հաստատ ասել, թէ պահանջները բաւարարութիւն կը ստանան առանց յապաղման։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Սենատին տրված Բարձրագոյն հրամանով փոխվում է դատաստանական մասի կազմութիւնը արևելեան ծայրերում։ Պորտ-Արտուրեան նահանգական դատարանը վերացվում է, Եակուտսկի շրջանի դատաստանական պալատի կազմի մէջ հաստատվում է նահանգական դատարան—Սահմանագլխային անունով։ Պետական խորհրդի ստատս-սէկրէտարի օգնական կոմս Բոբրինսկին նշանակւում է Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։ Ալտայսկի շրջանի պալատի կաբինէտի վարչութեան կառավարիչ բարոն Մէլլէր-Զակոմելսկին պաշտօնից արձակվում է համաձայն խնդրագրի—Պետերբուրգի գաւառական զեմստվային վարչութեան նախագահ ընտրվելու պատճառով։ Փետրվարի 6-ին վախճանվեց Սենատի քրէական վճռաջինջ ատեանին նախագահող Րէպինսկին։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 6 փետրվարի։ Մագնատների պալատի միաձայն ընդունեց այն վճիռը, որ յոյս է յայտնում, թէ պալատը կը հրաւիրվի օրէնքով որոշված ժամանակամիջոցում։ Ժողովը փակված է, շինութիւնը կնքված է՝ նոյնպէս կնքված է պատգամաւորների պալատը։ Հրովարտակում ցոյց տուած ցանկութիւնը՝ շուտով հրատարակել ընտրութիւններ նոր պալատի համար, զրկում է ազնուացիւյի հնարաւորութիւնից։ Կառավարութեան հրատարակած հաղորդագրութեան մէջ յայտնվում է, որ պարլամենտի արձակումը և կոմիսարի նշանակելը չի կարելի վերագրել ինքնիշխանական ակտերի թւին։ Թագաւորն անպայման իրաւունք ունի իրականացնել իր արտօնութիւնները կոմիսարի միջոցով։ Վերջինիս նշանակելը, որ հաստատված է մինիստր-նախագահի ստորագրութեամբ,— սահմանադրական կառավարութեան ակտ է։

ԱԼՋԵՍԻՐԱՍ, 6 փետրվարի։ Գերմանիան մերժեց Ֆրանսիայի այն առաջարկութիւնը,—որով պահանջվում էր, որ Մարոկկոյի սուլթանը ոստիկանութեան կազմակերպութեան համար ընտրէ ֆրանսիացի և սպանացի սպաների, քանի որ այս առաջարկութիւնը հակասում է տէրութիւնների հաւասարութեան սկզբունքին։

ՌԻԳԱ, 6 փետրվարի։ Ֆօնիքսի գործարանի մօտ չարագործների ամբոխը կրակ բացեց զինուորական պահակախմբի վրա, որը իր կողմից կրակ բանալով, սպանեց մի բանւորի և միւսին վիրաւորեց։ Վիրաւորված են երկու զինւոր, վեց չարագործներ բռնված են։

ՄՈՍԿՎԱ, 6 փետրվարի։ Փակվեց առևտրա-արդիւնաբերական ժողովը։ Վերջին նիստում որոշված է համաձայնութեան գալ հոկտ. 17-ի դաշնակցութեան և միացած չափաւոր կուսակցութիւնների հետ՝ Դումայի թեկնածուների վերաբերմամբ։

ՎԱՐՇԱՎԱ, 6 փետրվարի։ Կլեարեւէվ կայարանի մօտ 6 զինված կողոպտիչներ վագոնի մեկնելու ժամանակ վախեցնելով ճանապարհորդներին, արձակելով ատրճանակներից, կողոպտեցին Էպշտէյնի գործարանի երկու ծառայողներին, որոնք իրանց հետ տանում էին 4500 րուբլի։

ԵԼԻՍԱՎԷՏԳՐԱԴ, փետրվարի։ Զէմստվային արտակարգ ժողովը զէմստվային և քաղաքային գործիչների համագումարը համարեց ոչ բաւականաչափ լիազօրութիւն ունեցող և զէմստվային Ռուսաստանի հայեացքների արտայայտիչ։ Վիճաբանութիւնների մէջ յաղթեցին օրինակարգի անդամները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Տիմիրեազէվը հրաժարվեց պաշտօնից, ընդհանուր քաղաքականութեան հարցերի վերաբերեալ կաբինէտի հետ համաձայնութեան չը գալու պատճառով։

8 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Լրագիրների հաղորդած լուրերի համաձայն, ուժեղացրած պահպանութեան խորհուրդը ցանկալի համարեց-մշակել բացառիկ օրէնսդրութեան կանոններ—նման ֆրանսիական և պրուսական սիստեմներին։

ՎԻԵՆՆԱ, 7 փետրվարի. (Բիւրօյի Թղթ.) Պատգամաւորների պալատում վիճաբանութիւնների ժամանակ Ունգարիայի մասին յարուցած հարցի պատասխանի առթիւ, բոլոր ճառախօսները միաձայն յայտնեցին, որ Աւստրիայի և Ունգարիայի միութիւնների հիմունքները պէտք է կարգաւորվեն այն ձևով, որով լիովին ապահոված համարվեն Աւստրիայի տնտեսական և քաղաքական շահերը։ Սերբիայի հետ պատահած մաքսային վէճի առթիւ մինիստր նախագահը յայտնեց, որ կառավարութիւնը ցանկանում է կանոնաւորել յարաբերութիւնները Սերբիայի հետ։ Բանակցութիւնների վերականգնելը կախված է սերբբուլղարական մաքսային միութեան այն որոշումների փոփոխելուց, որոնք հակառակ են օրէնքին և խախտում են Աւստրո—Ունգարիայի առևտրական շահերը։ Առևտրական դաշինքը Ռուսաստանի հետ յանձնված է մասնաժողովին։

ԽԱՐԿՕՎ, 6 փետրվարի։ Անասնաբուժական ինստիտուտի աւարտման քննութիւնները կը կայանան մարտին։ Ռուսաստանի հարաւի երկրագործական գործիքներ պատրաստող գործարանների ներկայացուցիչների ժողովը կը բացվի փետրվարի 11-ին։

ԲԵՐԼԻՆ, 6 փետրվարի։ Սակսօնական երկաթուղիների վարչութիւնը — անմիջապէս արձակման սպառնալիքով—արգելում է ծառայողներին՝ մասնակցութիւն ունենալ երկաթուղային ծառայողների միութեան։

ԼՕՆԴՕՆ, 7 փետրվարի (Րէյտէր)։ Համայնքների պալատում Բաններմանը ընդունվեց ծափահարութիւններով։ Դիկէնսօնը և Բլանդը առաջարկութիւն են անում թագաւորի պատասխան ուղերձի առթիւ և յայտնում են, թէ Մեծ Բրիտանիայի միւս տէրութիւնների հետ ունեցած երջանիկ յարաբերութիւնները հետևանք են թագաւորի եռանդուն աշխատանքների, ողջունում են սօցիալիստական օրէնսդրութեան ծրագիրը։ Մինիստր-նախագահը պատասխանելով Չեմբըրլէնի հարցին ասաց, որ մարօկեան կօնֆերենցիայի գործը առաջ է գնում, Անգլիան ցոյց է տալիս Ֆրանսիային դիպլօմատիքական աջակցութիւն, առանց թշնամական ծրագիրների դէպի մի այլ տէրութիւն։ Ֆրանսիայի հետ ունենալիք բարի յարաբերութիւնների աճելը՝ անգլիական քաղաքականութեան ամենագլխաւոր հոգսերից մէկն է։ Չեմբըլէնը իր ճառի մէջ ասում է, թէ ծիծաղելի կը լինէր փոքրացնել ազատամիտների չեղած յաղթութեան նշանակութիւնը։ Բաններմանը պէտք է հասկանայ, որ իրա վրա է ընկնում իր իշխանութեան ներքոյ եղած ահագին մեծամասնութեան գլխաւոր պատասխանատուութիւնը։ Կուսակցութիւնը կարող է բողոքել, բայց անկարող է կազմակերպել մի դաշնադրութիւն, որ կարողանայ վայր ձգել մինիստրութեանը։ Վերջում Չեմբըրլէնը իր համոզմունքը յայտնեց մաքսային րէֆօրմի անհրաժեշտութեան մասին։ Պատասխանելով ճառախօսին, Բաններմանը նկատեց, որ շնորհիւ Չեմբըրլէնի ջանքերին մաքսային հարցը ընկել է նոր փազիսի մէջ։ Չեմբըրլէնը այլևս կուսակցութեան պարագլուխ չէ (ծիծաղ)։ Ի՞նչ միջոցներով ունիօնիստները մտադիր են մըտցնելու պետական րէֆօրմը—ներկայ նրանց համար բարեյաջող պայմաններում,—երգիծաբանօրէն հարցրեց Բաններմանը Չեմբըրլէնից։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 7 փետրվարի։ Յունվարի 28-ին մահվան փորձ է արված Կօլումբիայի հասարակապետութեան նախագահի կեանքի դէմ։ Ութ գնդակներից հինգը ընկել են կառքի մէջ. նախագահը անվնաս է։

ԲԵԼԳՐԱԴ, 7 փետրվարի։ «Շտամբ»-ի ասելով՝ կաբինէտի առաջիկայ փոփոխութիւնը չի պահանջի արմատական բարենորոգումներ։ Նախկին մինիստր նախագահ Վլադան Գէօրգէվիչը դատապարտված է 6 ամիս բանտարկութեան պետական ակտերի հրատարակութեան պատճառով։

ՏՕԿԻՕ։ 7 փետրվարի։ Այստեղ ժամանեց պրինց Արթուր Կօնաուգտկին, որին դիմաւորեց կայսրը կայարանում։

ԲԵՐԼԻՆ, 7 փետրվարի։ Առևտուրի պալատի ներկայացուցիչների ժողովի ճաշի ժամանակ Բիւլօվը ճառ արտասանեց, որի մէջ ասաց թէ՝ նոր հարկերը անհրաժեշտ են Գերմանիայի ներսում խաղաղ զարգանալու համար. բողոք յայտնեց այն կարծիքն դէմ, իբր թէ նա ընդունում է միայն կալւածական օրէնքները-անմիտ բան կլինէր չընդունել առևտրի և արդիւնաբերութեան ահագին նշանակութիւնը. իր եզրակացութեան մէջ, Բիւլօվը գովասանութեամբ խօսեց գերմանական վաճառականի եռանդի մասին, առանց որի թերևս Գերմանիան չէր ունենայ քաղաքա-տընտեսական դրութիւն աշխարհում։

ՎՈՐՕՆԷԺ, 6 փետրվարի։ Բանտի շինութեան մէջ բացվեց ժամանակաւոր զինւորական դատարանի նիստը—քննելու համար Վորօնէժի կարգապահական բատալիօնի գործը։

Մեղադրվում են 60 հոգի, որոնցից մէկը փախաւ։

ԼՕՆԴՕՆ, 7 փետրվարի։ Համայնքների պալատում Չեմբըրլէնը ասաց, որ Անգլիայի յաճախ արած առաջարկութիւնների նշանակութիւնը աւելի ևս կը մեծանար, եթէ միայն օտար տէրութիւնները իմանային, որ չնայած անգլիական կաբինէտների փոփոխման, դէպի արտաքին հարցերը ունեցած հայեացքները մնում են նոյնը։ Ապա Չեմբըրլէնը յայտնեց, որ Անգլիան մասնակցում է Մարոկկոյի գործերի համար կազմած կօնֆերենցիային, որպէս Ֆրանսիայի բարեկամ։ Անկասկած Անգլիայի կողմից արված դիպլօմատիքական աջակցութիւնը Ֆրանսիային, կհամապատասխանէր ամբողջ պալատի ցանկութեան։ Չեմբըրլէնը վերջացրեց նրանով որ կուսակցութիւնը կընդդիմանայ իրլանդական հօմրուլ մտցնելուն։ Լորդերի պալատում Րիպէնը բաւարարութիւն յայտնեց ռուս եապօնական պատերազմի վերջանալու առթիւ, որի մէջ երկու կողմերն էլ քաջութիւն ցոյց տւին։ Անգլիան պարծենում է քաջ Եապօնիայի դաշնադրութեամբ և կը գործադրի դաշինքի վերաբերմամբ արտաքին քաղաքականութեան մէջ անընդհատութեան սկզբունքը։ Ալժէսիրասի բրիտանական ներկայացուցիչներին յանձնարարված է աջակցել Ֆրանսիային։

ԵԱՆՕՎ, 7 փետրվ.։ Յունվարի վերջում Նոտօկ գիւղում հինգ հարիւրից բաղկացած գիւղացիների ամբոխը դատեց մի յայտնի աւազակի, որին սպանելով փայտերով, ձգեց ճանապարհի մօտ։ Միւս կասկածաւոր անձնաւորութիւններին ամբոխը հաւաքեց կաթոլիկների եկեղեցու մօտ և պահանջեց երդում—վերջ տնել գողութեան և գողին թագցնելուն։

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 7 փետրվ.։ Կայսերական կոմիսար գեներալ Նիւրէն հրատարակեց պաշտօնական արձանագրութիւն, պատգամաւորների պալատում պալկօվնիկ Ֆաբրիցիուսի երեկվայ երևալու առթիւ, ցոյց տալով—որ նա զինված ոյժով կարգելէ օրէնքով արձակած պատգամաւորների պալատի նորից գումարվելու փորձը, փետրվարի 8-ին։

ԲԵՐԼԻՆ. 7 փետրվարի։ «Ինֆօրմացիոն» գործակալութիւնն հրատարակած լուրը—իբր թէ արտաքին գործերի ստատս-սէկրէտար Չիրշկին դիմեց Անգլիացին բողոքագրով՝ Միջերկրական ծովից անգլիական նաւատորմըղի յետ կանչման առիթով ուժեղացնելու համար նաւատորմիղը հիւսիսային ծովում,—զուրկ է հիմքից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 փետրվարի։ Սենատը ընդունեց դատաստանական պալատների որոշումները՝ պարբերական հրատարակութիւնների վերջնականապէս դադարեցնելու և բողոքի կարգով վճիռը փոխելու իրաւունք չունենալու մասին։

Սենատը բացատրեց, որ օրէնքը հեռացնում է ընտրութիւնների մասնակցութիւնից ծառաներին, և դռնապաններին, դռնապանների կայարանները չեն համարվում բնակարաններ։ Կազմվում է մի նոր քաղաքական կլուբ «Սարատամսկիյ Պլօշնիկ» անունով, որ բացում են ազատամիտ տնտեսական կուսակցութեան մեծ գործարանատէրերը և ֆաբրիկանտները—Բօժէլը, Պալը և ուրիշները։

ԲԱՐՆԱՈՒԼ, 7 փետրվարի։ Գիւղացիները ինքնակամ կերպով կտրում են կաբինետային հողերում գտնված անտառները, բայց վճարում են երկրի հարկերը։ Ուղարկված են կազակներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 փետրվարի։ Այսօր արտաքին գործերի մինիստրութեան մէջ վիճաբանութիւններ եղան նոր առևտրի կօնվենցիայի վաւերացման առիթով որ կապվեց Պետերբուրգում, սեպտեմբերի 16-ին Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ։

ՕՉԱԿՕՎ,6 փետրվարի։Այսօր սկսվեցին ժամանակաւոր զինւորական դատարանի նիստերը՝ Նովօրօսիսկի ուսանողների, լէյտէնանտ Շմիդի «Օչակով» մարտանաւի 37 զինւորների և մի գիւղացու գործերը քննելու համար։ Նախագահում է պօլկօվնիկ Ալէքսանդրօվը, մեղադրում էր պօլկօվնիկ Րէնմէնը, պաշտպանում են Զարուդնին, Վրբուլէվսկին, Ալէքսանդրօվը, Բալլավինսկին, Վինբէրգ, կապիտան Դէվիսօնը։ Շմիտը մեղադրվում է քրէական օրէնքի 51 և 101 յօդ. նաւաստիները՝ 100 և 109 յօդ.։ Գործը կը տևի 10 օր։

ԲԱԳՈՒ, 7 փետրվարի։ Փետվարի դէպքերի տարեդարձի օրը խաղաղ անցաւ։ Երեկոյեան ժամի 6-ին, քաղաքի ամենաբանուկ տեղում, «Եւրօպա» հիւրանոցին կից, անյայտ մարդիկ մտնելով Հախվերդեանի շուշեղէնի պահեստը և քաշելով կառավարիչ Աբեսոլոմոնեանին պահեստի ներսը, խեղդեցին և կողոպտեցին նրան, ապա կողոպտեցին նաև գանձարանը։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ, 7 փետրվարի։ Բերդեանսկի գաւառում ձերբակալված են մի քանի զէմստվային ուսուցիչներ, գիւղացիների մէջ ագիտացիա մղելու համար։

ՄՕՍԿՎԱ, 7 փետրվարի։ Տեխնիքական ուսումնարանում աւարտեցին ինժեների կոչումով 21 հոգի։ Քաղաքային վարչութիւնը վճռեց ցուցադրել ընտրութիւնների ցուցակները Մոսկվայում մարտի 1-ին։ Վաղվայ բացվելիք հոկտեմբերի 17-ի կուսակցութեան ժողովի համար Մոսկվա հասան 600 պատգամաւորներ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Ց. Մ. ՋԻՒՑՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՄԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Պ. Գ. ՏԱՐԱՊՏԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համաճարակի (կօնսուլտացիա) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և էլեկտրո-բուժութիւն։
Պ. Ն. ԴԵՄԻՏՈՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Պ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Պ. Ա. ԲԷԿԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպերացիայի և համաճարակի վճարը ըստ համաձայնութեան։ Դիեցերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համէրներից։
(Տ.ու.կ.) 36—100

ԲԺԻՇԿ
Տ. Խախախեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը։
Վելեամինովսկայա փողոց, № 22, Նաւտիկովի տանը։
(Ե. Հ. Շ.) 15—14

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն այն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 47—100

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, փետրվարի 11-ին նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
ընդհանուր հիմունքներով
Սկիզբը երեկոյեան 10 ժամին։
1—3 (Տ.ու.կ.)

Գերմաներէն խմբային պարապմունքներ ցանկանում է կազմակերպել մի գերմանուհի ՎԱՐԺՈՒՀԻ. պայմանների մասին իմանալ վարժուհիների ընկերութեան մէջ։ Անկիւն Գրաֆսկի և Տրօյիցկի փողոցների տ. № 7. ժամի 10—3 ցերեկվայ։ (Հ) 1—1

Փետրվարի 5-ից հրատարակվում է
„ԴԻՏԱԿ“
Ժողովրդական շաբաթաթերթ
Բաժանորդագինը՝ տարեկան 2 ր. վեց ամիսը 1 ր. երեք ամիսը 50 կ., արտասահման՝ 3 ր. 1½ դոլ. և կամ 8 ֆր.։ Մինչև ապրիլի 1-ը 2 ր. վճարողը կը ստանայ ձրիաբար «Բառարան հայ կենսագրութեանց» գիրքը։
Հասցէն՝ Тифлисъ. ред. «Дитакъ» կամ Tiflis (Caucase) red. «Ditak».
Խմբ.-հրատ.՝ Հայկ Տէր-Աստուածատրեանց
(Հ. Կ.) 1—2

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլետ, Պոտերստեն, Շմիտ, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երեւում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, Չըջրուկի, (золотуха) դալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջիղերը հանգստացնելու վրա։ Կարելի է ձեռք բերել Օ. Կորօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։ (Հ.Կ.) 1—10

Սարգիս Եսայեքեանցը պատիւ ունի ծանուցանել հասարակութեան, որ նրա արհեստանոցում կան թէ պատրաստի և թէ անընդհատ պատրաստվում են չոր նիւթից
ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
ԿԱՀԿԱՐԱՍԻՔ
պահարաններ, բուֆէտներ, հայելով պահարաններ գրքի, զգեստների պահարաններ, ծալվող սեղաններ, շիֆօնիեր և ուրիշ կերտուածքներ։
ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Հասցէն՝ Վելիամինովսկի, № 19, տուն Լօրիս-Մէլիքեանի։ (Հ.ու.չ.) 1—3

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, № 13։ (Հ.Կ.Ե.) 7—29

ԼԵՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.։
Դիմել «Գուտտէմբերգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր։ 7—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (Ե.Ո.)41—13

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամ, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գոլովինսկի պրոսպեկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղետսկի փողոցից № 2, (ա. օ.) 86—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 62—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 47—100

Լոյս տեսաւ
ԲԵԲԵԼԻ
Կնոջ անցեալ եւ ապագայ դրութիւնը
Թարգ. ռուսերէնից օր. Սօֆիա Շահնազարեան
Գինն է 10 կոպ.
Դիմել գրավաճառներին։ 3—3

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ
«ՋՈՒԼՀԱԿՆԵՐ»-ի
հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.։ Դիմել՝ Москва, контора Бр. Джамгаровыхъ, С. Артемьевой. 5—5

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս՝ գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ
ԲԱԶԱԶԽԱՆԻ ՄՕՏ
(Манташевскіе ряды)
ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹ
Դաւիթ Եսայեան Առաքելեանցի
Յայտարարում եմ ի գիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին՝ թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մայդանում և թէ Սալդատսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազազխանի մօտ, Մանթաշեանցի նոր շինութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիւները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ դադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում։ Յուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան։
5—10 (Հ. Կ.) Յարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

Բացված է 1906 թ. բաժանորդագրութիւն
ՀԱՍԿԵՐ
Մանկական պատկերազարդ ամսագրի
Ամսագիրը լոյս է տեսնելու Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով
Ամսագրի նպատակն է՝ ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ զգացումներ, արթնացնելով նրանց մէջ սէր դէպի մարդը և դէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց ճաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։
Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ, որ կազմուած կը լինի հետեւեալ մանկավարժական գրէերի, ԾՐԱԳՐԱՆԻՑ.
1. Երեխայի կրթութիւնը մինչեւ 6-տարեկան հասակը։ 2. Երկիւղն ու քաջութիւնը սկզբնական կրթութեան մէջ։ 3. Երեխաների խաղը։ 4. Երեխաների ինքնահաճութիւնները եւ դիւրագրգռութիւնը։ 5. Սովորութիւններ, նրանց նշանակութիւնը ու կրթութիւնը։ 6. Ինչպէս պէտք է ծանօթացնել երեխաներին սեռական կեանքի հետ։
Այս գրադարանի մէջ շօշափւած կը լինեն ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևոր հարցեր։
Բաժանորդագինն է ճանապարհածախսով.

Տարեկան. ՀԱՍԿԵՐ, մանկական բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժնով	4 ռ.
Հին բաժանորդների համար	2 ռ. 75 կ.		3 ռ. 65 կ.
Կէստարւանը	1 ռ. 50 կ.		2 ռ. —
Մէկ ամսուայ	— 25 կ.		— 35 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆր.
Հրատարակութեան սկզբից մինչև 1906 թ. վերջը			5 ռ. —

Խմբագիր—Հրատարակիչ՝ Կաս. Լիսիցեան
Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25. (Тифлисъ Редакція журнала «Аскеръ», կամ (Tiflis (Caucase) Rédaction du journ.«Hasker».
Թիֆլիսում կարելի է գրւել նաև «Գուտենբերգ» գրախանութում և «Հերմէս» տպարանում, իսկ Բագւում՝ Сотрудникъ գրախանութում։
Հին բաժանորդներին յունվարի №-ը կուղարկվի ձրի։

„ԸՆԿԵՐ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԳԻՐ, ԼԻԱԿԱՏԱՐ ԾՐԱԳՐՈՎ
«Ընկերի» նշանաբանն է նպաստել երիտասարդ սերունդի ինքնակրթութեան ու ինքնաշխատութեան գործին, այն ուղղութեամբ, որ բարոյապէս ու մտաւորապէս ընկճված, բայց ի բնէ աշխատասէր ու քանքարաւոր, հայ ժողովրդից յառաջ գայ մի անպայման լուսամիտ ու քաղաքակիրթ հասարակութիւն, որը ոչ միայն կարողանայ ստեղծել իր համար մի արժանաւոր ու վայելուչ դրութիւն, այլ և կարողանայ բարոյական ու մտաւոր լոյս սփռել հարևան-ընկեր ժողովուրդների մէջ և այսպիսով ծառայել իր հանրամարդկային բարձր կոչման։ Կարճ ասած՝ «Ընկերը» յառաջ է ձգտելու այն ճանապարհով, որ ընդգծել են «Հիւսիսափայլը» ու «Մշակը»։ Սկսելով փոքրից, մենք մեր բոլոր ջանքը գործ ենք դնելու, որ «Ընկերը» անընդհատ կատարելագործվի՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ։ «Ընկերը» ունենալու է նոյնպէս օտարազգի գիտնական ու հրապարակախօս աշխատակիցներ։
Տարեկան բաժանորդագինը Թիֆլիսում ու Անդրկովկասի մեծ քաղաքներում (ուր մենք գործակալութիւն ունենք), առանց փոստի՝ 3 ր. փոստով՝ 4 ր. արտասահման 5 րուբլի։ Ամսական բաժանորդ չէ ընդունւում։ Բաժանորդ գրւողը իսկոյն ստանում է բոլոր լոյս տեսած համարները։ Միջոց չունեցողը կարող է մաս-մաս վճարել։ Յայտարարութիւնների համար շատ մատչելի գին է վերցնվում, միայն թէ չեն ընդունվում այնպիսի յայտարարութիւններ, որոնք մտաւոր ու հասարակական կեանքի հետ մօտաւոր կապ չունեն։ Սգային յայտարարութիւններ ընդունվում են միայն այն դէպքում, երբ ննջեցեալը մի որևէ դեր է խաղացել հասարակական կեանքի մէջ։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Ингеръ». Խմբագիր-հրատարակիչ փիլ. դկ. Սեդրակ Թառայեանց։ (Ե. Կ. Կ.) 2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ
Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրօլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ։
«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրօլետարիատի շահերին և կարիքներին։
Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է։
Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու։
«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ։
«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 րուբ. —	Արտասահմանի համար տարեկան 5 րուբ. —
կէս տարին 2 » —	կէս տարին 2 » 50 կ.
ամիսը — — 40 կ.	ամիսը — — 50 »
հատով №-ը — — 10 »	հատով №-ը — — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 րուբլի, մայիսին՝ 1 ր. և սեպտեմբերին՝ 1 րուբլի.
1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից։
«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ։
Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27։ Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.
Խմբագիր-հրատարակիչ՝ Աւոս Արանեան
(Ե. Ո.) 8—12

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.